

Բաժանորդագիրն կԱՆՈՒՅԻՔ Թուրքիոյ համար
տարեկան 50 դր, Ռուսիոյ համար 50 դր, Եւրոպայի
ուրիշ երկիրներու համար 120 դր:
Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու-
թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոշմ
կ'ընդունուի 1 դր, նոյնը 34 փարայի հաշ-
ւով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դր:
ԵԱՂԻԿԻ փրօքերեալ ամէն գործի համար
դիմել:

Ս.Ո ՏԵՐԵԿԵ-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ
Պոլիս, Պաշկե-Գաբու, Թաշ Խան, քիւ 50

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԵԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ք

درعليه ده بفتح قوسنده طاش خاند
ه نومروده « زايك » غزتهسى مديرى
بالاقاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 22

ՇԱԲԱԹ

14 ՄԱՐՏ 1892

ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԵԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւ
ունի ծանուցանել իւր ընթերցողաց
թէ, դռնացումն տալու համար այն
խնդրանաց զորս յաճախ կ'ընդունին,
հաստատած է յձանակասարութեան
Գրասենեակ մը:

Յանձնակասարութեան Գրասենեակը
կը հայթայթէ մեծ և փոքր քանա-
կութեամբ ամէն տեսակ ապրանք
թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հը-
րապարակներէն գնելի, ինչպէս,
գիրք ամէն լեզուաւ, պատկերք,
ձայնագրութիւնք, դպրոցական և
գրասենեակի պիտոյք, ժամացուցի,
տպարանական և այլ արհեստական
գործիք, կտաւեղէնք, ասուեղէնք,
լմպելիք, անուշահոտութիւնք, կահ
կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի
հարկին կարելի է պայմանաժամաւ
եւս գործել այն տանց հետ որ կըր-
նան արտագրիչներն ապահովել փո-
խադրութեան ծախք կը պատկանին
յանձնարարաց: Յանձնակասարութեան Գրասենեակը
կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներ-
քին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օ-
տար հրապարակաց վրայ: Առ այդ
կը բաւէ շրկել վաճառելի ապրա-
նաց նմանքները:

Յանձնակասարութեան Գրասենեակը
կը փափագի ունենալ թղթակիցներ
գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղ-
ջուին առ Յ. Գ. Փալազաշեան, Կ.
Պոլիս, Պաշկե գաբու, Թաշ Խան,
թիւ 50:

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲԱՒԱԽՈՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՑ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՀԱՄԱՅՆ ԵՐԻՊ. ԹՈՒՐԳՈՅ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԳՈՅ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ

ՖՐԱԹԵԼԼԻ ԿՈԼՏԵՆՊԵՐԿԻ

Այս վաճառատունը կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցմուն
կրնայ դիմագրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբ, պատրաստութեան
տոկունութեամբ, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կարուածքով:

ՎԼԵԱԽՈՐ ՄԹԵՐԱՆՈՅԳ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, եւ Քարաքէօյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵԾԱՐԱՆԱԿ ԵՒ ՓՈՐՐԱՐԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԱՍՆԱՃԻԻՂՔ

Հռոմոս, Քափալա, Ռուսնուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ,
Բոր-Սաիտ, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ,
Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքքա, Ալեքսանտրիա, Դահիլէ,
Եայլն, Եայլն:

PAPETERIES DE VIDALON

Թ Ղ Թ Ե Ղ Ի Ն Ա Ց

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՎԻՏԱԼՈՆԻ

Հիմնեալ 1597 ին յ'Աննօնէ

Դրամագլուխ 3,450,000 Փրանք:

Կ'արտադրէ տարին 3,000,000 թղթաւուն անկի

Ներկայացուցիչ Հանրի Ժարտօն, Պարիս



Դրամենեկի և տպագրական զանազան տեսակ ընտիր թուղթեր, զձագրու-
թեան թուղթ սպիտակ և դանդաղ գոյներով, ծծուն թուղթեր, զանազան
տեսակ ստուարաթղթեր (մուխալ), լուսանկարչական թուղթեր, մագաղա-
թանման թուղթեր, նամական պահարաններ, և այլն, և այլն:

ԵԱՂԻԿԻ կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի
բայ. — Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար դիմել
ՎԵԱՂԻԿԻ ինքնագրատունը:

18—20



MAISON PHÉNIX

Բերա, Բասաժ տիւ Թիւնէլ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Շապկեղինաց, ձերմակեղինաց եւ Բրդեղինաց



Վաճառատունս կը յայտարարէ իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, Նանսիի և Բիւմպէրկի աշխարհածանօթ գործատուններէն ի նորոյ ստացած է մեծ քանակութեամբ վերջին նորաձեւութեանց համաձայն շինուած՝ արանց, կանանց և մանկանց համար պատրաստ հագուստեղէններ, օժիտի համար բազմատեսակ ձերմակեղէններ, կնուռքի համար մանկանց զգեստներ և այլ ամէն տեսակ ապրանքներ:

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.

	Հատը	Չոր.
Շապկի կտաւեայ	14 5ն 47 1/2	
» գունաւոր տպածոյ	» 10 5ն 28	
» ֆանէլա	» 21 5ն 42	
» գիշերանոց	» 12 5ն 27	
Անդրաժարտիկ	» 10 5ն 21	
» մատամբօլ	» 15 5ն 22	
Օձիք կտաւեայ	» 17 5ն 54	
Թեւնոց	» 29 5ն 65	
Թաշկինակ այլ և այլ տեսակ	» 14 5ն 135	
Գուլպաներ՝ ֆիլ տիէքօս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ	» 29 5ն 145	
Փողկապ այլ և այլ տեսակ	» 3 5ն 19	

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

	Հատը	Չոր.
Շապկի՝ լաւ տպածոյ, դիմացկուն, պրօտըրիով	15 5ն 27	
» » » տանթեւայով	» 18 5ն 31	
Վարտիկ » » » »	» 14 5ն 22	
Վարտիկ » » » պրօտըրիով	» 11 5ն 24	
Միսօ » » » »	» 20 5ն 38	
» » » տանթեւայով	» 25 5ն 65	
Քօրսէ՝ Բարիզի Կուրտէ գործատան	» 26 5ն 70	
Քօրսաժ բամպակեայ, մետաքսեայ	» 11 5ն 26	
Ֆանէլա լաւագոյն տեսակէն	» 15 5ն 40	

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստեղէնք և ձերմակեղէնք:

	Չոր.
Սեղանի սփռոցներ գունաւոր՝ 6 անձեռոցով	20 5ն 39
» » գունաւոր 6 և 12 »	65 5ն 145
Անկողնոյ ծածկոցք մէթրը	9 5ն 17
Գուլպայ՝ ֆիլ տիէքօս, բրդեայ, բամպակեայ	» 40 5ն 145
Կտաւ Վիշիի, մէթրը	» 3 5ն 5
Սպիտակ տպածոյ՝ լաւագոյն տեսակէն	» 2 5ն 5 1/2

Եւ ուրիշ ամէն տեսակ ապրանքներ
Յանձնարարութեանց համար պէտք է գրել «Մաղիկ»ի Յանձնակատարութեան Գրասենեակին:

14—52

Նիքօլա Ստոյիովսկի

Լ. Գ. Ս. Ս. Ս. Ս.

Ի Պոլսոյ, Մուլթան, Պայագիտ,

Քէօքսիլիէն պաշտ, Թիւ 99

Լուսանկարչատան մէջ կը պատրաստուին ամէն տեսակ լուսանկարներ՝ եւրոպայէ նոր հասած բազմաթիւ նորահնար գործիչներով, Պ. Ն. ԱՆՏՏԻՍՈ. Մէլօ ինքն անձամբ կը հանէ իւր բազմաթիւ յաճախորդաց պատկերները, Յաճախորդներն կատարելապէս գոհացնելու համար, յանձնարարուած լուսանկարներու ՕՐԻՆԱԿը ցոյց կը տրուի նախապէս, և եթէ չհաւանութիւն կրկին անգամ կը լուսանկարուի, մինչև որ հաւանութիւն չկայ: Վերջոյ թիւն մը զոր մայրաքաղաքի մէջ մի լուսանկարիչ յանձնակալու: Կազմակերպութեամբ մեր բազմաթիւ յաճախորդաց որ, ինչպէս յստակ և պայծառ օրեր, նոյնպէս և ամպոտ և միտակցապատ օրեր լուսանկարք կը հանուին ամենայն յաջողակութեամբ, չնորիւ նոր գիտութիւն:

Կը խնդրուի գգուշանալ կարգ մը նորերէն լուսանկարիչներէ ուր կը գործեն մեր անուամբ:

8—12

ԼԵՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԿԼԻՈՑ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Դաղդիոյ Կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բէփիւսլիք փողոց,

Լիոն (Ֆրանսա)

Առհաւելութեամբ 100,000 000 ֆր.

ԼՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպատաւաւ համար փոքր խնայողութեանց, արագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերականգնել դրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնք բազմադիմի են, ինչպէս շարժական արժէք և փոխ տրուած դրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ դրամագլխոյ մը վերականգնութիւն, Երաշխաւորութիւնք և Դիւսալմարք փոխառութեանց և ճարտարութեանց և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոց, մանկանց համար օժիտք, հանգստեան սնտուկ ձերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 15-ն:

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար դիմել առ Բարսեղ Էֆէնտի Թէլլալեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլսոյ, Պահէճ—Գարու, Շէյխ—Իսլամ խան, Թիւ 11:

LE CONSEILLER DES MÈRES ET DES JEUNES FILLES

Կը հրատարակուի ի Բարիզ իւրաքանչիւր ամսոյ 1ին և 15ին «Մաղիկ»ի դիրքով և պատկերազարդ: Ներկայ տարւոյս սկիզբէն մտած է իւր Արդ տարին: Տարեկան բաժանորդագրինն է Թուրքիոյ համար 15 ֆրանք: Բաժանորդագրուիլ փափագողք պէտք է դիմեն «Մաղիկ»ի Յանձնակատարութեան գրասենեակին, 15 ֆրանքի փոխարէն ղրկելով 75 ղրուշ:

ԱՐԵԻԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ, Ամսաթերթ Ազգ. Գրական եւ Քաղաքական. իրարազիր-Հրատարակիչ՝ Մատթէոս Մամուրեան: Տարեկան բաժանորդագրինն է 80 ղրշ: Ազգ. ուսուցչաց համար 50 ղրշ: Բաժանորդագրութեան համար կարելի է դիմել «Մաղիկ»ի իմպագրութեան:

Բաժանորդագիրն կԱՆԻՏԻՆ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 զրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու-թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակադրոշմ կ'ընդունուի՝ 1 զրշ:նոցը 34 փարայի հաշ-ւով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ: ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար զիմեւ:

Սեռ Տնօրէն-Հրատարակիչ
ՅԱՆԱՆ Պ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պոլիս, Պաշէ-Կափու, Թաշ Խան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Գ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاندہ
• نومروده «زاغیک» غزتیسی مدیری
بالاقاشیان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 22

Շ Ա Բ Ա Թ

14 ՄԱՐՏ 1892

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Գաւառներէն հետզհետէ լուրեր կը հասնին ծանուցանող ընտրութիւններն թեմական պատգամաւորաց, որք պիտի երթան յիշմիածին՝ մասնակցելու համար Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան:

Այսպէս, Զմիւռնիայէն ընտրուած է Գարեգին էֆ. Փափազեան, Տրապիզոնէն՝ Կաստաբան Յարութիւն էֆ. Շահրիկեան, Ադրիանուպոլէն՝ Մաքսուտ էֆ. Սանտալեան, Նիկիոմիդիայէն՝ Գասպար էֆ. Տ. Գասպարեան: Պոլսոյ թեմական պատգամաւոր կարգուած է Տիգրան էֆ. Կիւմիւրէնցի: Ի սոցանէ, Սանտալեան, Տ. Գասպարեան եւ Կիւմիւրէնցի տան էֆէնտիք ճանապարհի ծախքը պիտի հոգան իրենց քսակէն:

Առաջնորդներէն, ընտրութեան անձամբ մասնակցելու համար իշմիածին երթալու կը պատրաստուին Ադրիանուպոլսոյ Առաջնորդ Գեր. Տ. Մեսրոբ Եւպիսկոպոս, Նիկիոմիդիոյ Առաջնորդ Գեր. Տ. Ստեփաննոս Եպիս. Յովակիմեան, Զմիւռնիոյ Առաջնորդ Գեր. Տ. Ներսէս Ծ. Վ. Արսլանեան, Երզնկայի Առաջնորդ Գեր. Տ. Յովհաննէս Ծ. Վ. Արշարունի:

Ս. Պատրիարք Հօր կողմանէ ընտրութեան մասնակցելու համար փոխանորդ կարգուած է Գեր. Տ. Մաղաքիա Եպիս. Օրմանեան՝ որ կ'ըսուի թէ՛ կը հրաժարի այդ պաշտօնէն:

Պրուսայի Առաջնորդ Գեր. Տ. Բարթոլոմէոս Ս. Արքեպիսկոպոսի կողմանէ պիտի երթայ Գեր. Տ. Արիստակէս վարդ. Վանքեան:

Տրապիզոնէն իբրեւ եկեղեցական պատգամաւոր պիտի երթայ կ'ըսուի տեղւոյն Առաջնորդական փոխանորդը:

Ս. Երուսաղէմայ Ս. Պատրիարք Հօր եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան կողմանէ պատգամաւոր կարգուած են Լու-

սարապետ Գեր. Տ. Սահակ Եպիս. Խապայեան եւ Յարութիւն էֆ. Թորոսեան:

— Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցւոյն մէջ այս կիւրակի օր Թիֆլիսի առաջնորդական թեմին (Վրաստանի եւ Իմէրէթի) աշխարհական պատգամաւորին ընտրութիւնը կատարուելով, Արծաղանքի Խմբագրապետ Պ. Արգար Յովհաննէսեան Պատգամաւոր ընտրուեց է 46 քուէից բացարձակ մեծամասնութեամբ, եւ Նոր-Դաւիթ Խմբագրապետ Պ. Սպանդար Սպանդարեան ընտրուեց է Պատգամաւորի Փոխանորդ 43 քուէից բացարձակ մեծամասնութեամբ:

— Ռուսադաւանդեալներն ընդունելու է իշմիածնայ Ս. Գէորգեան ձեմարանի շրջանաւարտներէն Շուշեցի Գարեգին Տէր-Աւետիսով:

— Իշմիածնայ Սինօդն Դարբանդի հաշտարար դատաւորէն ստացեր է 691 ռուբլի 86 կոպէկ, ի նպաստ Կ. Պոլսոյ Հայոց Միացեալ Ընկերութեան:

— Մաղնիսայէն խմբագրութեանս ուղեւալ նամակ մը տխուր գոյներով կը նկարագրէ տեղւոյն ազգայնոց կրթական ու եկեղեցական վիճակը: Թաղական Խորհուրդն հրաժարած, արական եւ իգական վարժարանք անբարեկարգ վիճակի մը մատնուած են եղեր եւ վարժապետներն ալ իրենց ջնջին ամսականները մեծ դժուարութեամբ կ'ստանան: Աշակերտաց ու աշակերտուհեաց թիւն օր աւուր նուազելու վրայ է՝ փոխանակ բազմապիտան օտարազգեաց վարժարաններն յաճախող հայ պատանեաց թիւն յիսունի կը հասնի: Նորահաս երիտասարդութեան համար մտաւորական սնունդ մատակարարող ընթերցավայր մը չկայ, եւ ժողովուրդը, մանաւանդ այս Մեծ Պահոց օրերու մէջ, եկեղեցիէն հեռու կը մնայ:

Մեր թղթակիցն՝ այս ցաւալի իրողութեանց վրայ Զմիւռնիոյ Գեր. Առաջնորդին հայրական ուշադրութիւնը կը հայցէ:

Արեւել

— Անցեալ շաբաթ գիշեր կնքեց իւր մահկանացուն տաղանդաւոր բանաստեղծ, թատերագիտ եւ համարակալ Սրապիոն էֆ. Հէքիմեան, հեղինակ «Տաղք եւ Գերթուածք» յին, տպուած 1852ին:

— Երեքշաբթի օր յանկարծամահ եղաւ ազգային վաղեմի ուսուցիչ եւ խմբագիր Մինաս էֆ. Գաբամաճեան:

— Սամաթիոյ Ն. Վարդուհեան աղջկանց վարժարանին մէջ Ծրօսէլեան դրութեամբ Ծաղկոց մը բացուեցաւ:

— Մի երկու շաբաթ կայ արդէն որ իշմիածին ժամանել է դրսից եկող թեմական առաջին Պատգամաւորը, Պարսկաստան-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Գեր. Եսայի Եպիսկոպոսը իւր փոխանակ ուղարկել է՝ իբրեւ վերոյիշեալ թեմի հոգեւոր պատգամաւոր Արթ. Խաչատուր վարդ. Կարապետեան Ջուղայեցին: Արթ. Հայրը արդէն հասակն առած մի պատկառելի ծերունի է, մօտ 60 տարեկան: Առաջին անգամն է որ լինում է իշմիածնում, եղել է Հնդկաստան, Բիրմա, Ճաբոն եւ Չինաստան, երկար տարիներ կառավարել է Պարսկա-Հնդկական թեմը Առաջնորդների բացակայութեան ժամանակ: Խօսք չը կայ որ լաւ տեղեակ է պարսկական հայ գաղթականութեան գործերին եւ հետաքրքրական տեղեկութեանց անսպառ աղբիւր:

ԱՐԱՐԱՏ

— Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան Պաթոմի մասնաճիւղը որոշեր է երկսեռ ուսումնարան մը շինել, քաղաքին կողմանէ ընծայուած հողին վրայ:

— Գեր. Տ. Մովսէս Ծ. Վարդ. Կէօմրիւքեանի հրաժարականը Արապկիրի Պատր. Փոխանորդութենէ՝ մերժուեց է Խառն Ժողովոյ կողմանէ:

— Եւդոկիոյ եւ Ամասիոյ առաջնորդ Գեր. Եղիշէ Ծ. Վարդ. Այվազեան եւ իշմիածին պիտի ուղևորի կ'ըսուի, կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար:

— Խարբերդի առաջնորդական ֆո-
խանորդ կարգուեր է Արժ. Տ. Յովհան-
նէս Գաւ. Գրիգորեան: Խառն ժողովը
վաւերացուց Տէր Հօր այս պաշտօնը:

— Պանտրմայի Առաջնորդական ֆո-
խանորդ Արժ. Տ. Ոսկի Աւագ Բաշա-
նայ Օհանեան Պոլիս եկած է՝ վերջին
գէպքերուն առթիւ բողոքելու համար:

— Վաղը առաւօտ Պատր. Փոխա-
նորդ Գեր. Տ. Գաբրիէլ Ս. Վարդ. ձե-
վահիւրճեան Սամաթիոյ Ս. Գէորգ եկե-
ղեցւոյն մէջ, և Գեր. Տ. Մովսէս վարդ.
Կէօմրիւկեան՝ Պէշիկթաշի եկեղեցւոյն
մէջ քարոզ պիտի խօսին:

— Ս. Պատրիարք Հայրը մի քանի
օրէ ի վեր հիւանդ լինելով, Յունաց Ս.
Պատրիարքին կողմանէ Պատր. Փոխա-
նորդը Պատրիարքարան եկաւ որպիսու-
թիւնը հարցնելու: Արտաքին գործոց
նախարարութեան թարգման Կիւլլապ-
եան Միքայէլ էֆէնտի ևս Ն. Սրբազ-
նութեան տունն երթալով, որպիսու-
թիւնը հարցուց յանուն նախարար Վը-
սեմ. Սայիտ փաշայի:

— Տնտեսական Խորհուրդն երեք-
շաբթի օր շաբաթական նիստը կազմեց
ի Պատրիարքարան և զբաղեցաւ հետե-
ւալ խնդիրներով:

Քաղաքական ժողովն՝ Գոլգոլունճու-
քի Թաղական Խորհրդոյ խնդրանաց վը-
րայ՝ արտօնած լինելով Իճատիյէի վար-
ժարանին սեպհական արժէթղթոց վա-
ճառումն ու կալուածոց շինութիւնը,
Տնտեսական Խորհուրդը՝ Գոլգոլունճու-
քի Թաղական Խորհրդոյ հետ խորհրդ-
դակցելէ յետոյ կարեւորը տնօրինեց:

Պէօյիւքտէյէի Ս. Հռիփսիմեանց ե-
կեղեցւոյ անցեալ 1891 տարւոյ հաշուե-
ցոյցն համարատուութեան տեղեկագը-
րով մը մատուցուած լինելով, յանձ-
նուեցաւ կեդրոնական համարակալին ի
քննութիւն և ի տեղեկագրութիւն:

Խորհուրդը նկատելով որ հակառակ
յառաջագոյն ուղղեալ շրջաբերականին,
մայրաքաղաքիս Թաղական Խորհրդոց
մեծ մասը ներկայացուցած չեն իրենց
հաշիւները, որոշեց պաշտօնական ծա-
նուցմամբ վերստին հրաւիրել յիշեալ
Թաղական Խորհուրդներն իրենց օրի-
նական հաշուետուութիւնն ընելու
տասն և հինգօրեայ պայմանաժամու
մէջ, որպէս զի Խորհուրդը ժամանակ
ունենայ յառաջիկայ սահմանադրական
տարեգլխոյն առթիւ եկեղեցեաց մա-
տակարարութեան վրայ իւր ընդհանուր
տեսութիւնը յայտագրել Քաղաքական
Ժողովոյ:

Խորհուրդն ասոնցմէ զատ զբաղե-
ցաւ նաև Թոյի-գաբուի, Գում-գաբուի
դրսի, Սիւլտար Ս. Խաշի, Չմէկածագի
Հազարի գիւղի Ս. Երրորդութիւն և
Վանայ Աւերակ գիւղի եկեղեցեաց վե-

րաբերեալ հաշուական և կտակային
խնդիրներով:

Որոշեց յաջորդ նիստը գումարել
յառաջիկայ չորեքշաբթի ի Ղալաթիա:
— Ի Թիֆլիս հրատարակուող Կով-
կաս պաշտօնական ռուսերէն լրագրէրը
իւր մարտ 4 ի թուոյն մէջ կը ծանու-
ցանէ թէ Վրաստանի և Իմէրէթի թեմի
գաւառական քաղաքներու կաթողիկո-
սական ընտրութեան համար կարգեալ
բոլոր ներկայացուցիչք արդէն ժամա-
նած են ի Թիֆլիս և Թիֆլիսի թաղօ-
րէից ներկայացուցիչներու հետ ի միա-
սին նախապատրաստական գումարում-
ներ կ'ունենան խորհրդակցելու համար
թէ ո՞վ աւելի արժանի է թեմական
պատգամաւորութեան պաշտօնին, որ-
պէս զի յիշմիսին ճշդապէս ներկայա-
ցընէ Վրաստանի և Իմէրէթի Հայ ժո-
ղովրդեան փափաքը:

— Նորերս ոմանց հաճոյ եղաւ հը-
րատարակել մի լուր, իրր թէ էջմիած-
նում հրատարակուող Արարախի ստանա-
լը, որ մինչև այժմ պարտադիր էր բո-
լոր Հայ ուսուցիչներին համար, այժմ
կամաւոր է դառնում և միայն ցանկա-
ցողները պիտի ստանան: Յայտնում ենք
որ այդ լուրը անհիմն է: Փոփոխուած
Արարախի այն յունուարի համարն ու-
ղարկուած է բոլոր ուսուցիչներին ան-
խորտի:

(Նոր-Դար)

Գ Ի Ա Գ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Գրիգոր Արժունցոյ

Մեզ գրում են. «Էվէլիսա հոգե-
բանական էտիկա» ի քննադատութիւնը
կարդալով «Նոր-Դար»-ի մէջ, սպասում
էինք հետաքրքրութեամբ թէ ինչ կա-
սէ պ. Գ. Արծրունին: Թէպէտև շա-
տերն արդէն գուշակում էին որ ոչինչ
չի ասիլ, բայց և այնպէս զարմացանք,
երբ կարդացինք պ. Գ. Արծրունւոյ
տուած բացատրութիւնը, որ իսկապէս
ոչինչ չէ ասում: Ասել թէ Էվէլիսան ին-
քըն է գրել, որ ինքը Մարտէյլ Պրէվո-
յի «Իդէալիստի խոստովանանքը» չէ
կարդացել և այլ այդպիսի առակներով
ոչինչ չէ հերքում: Անրան մարդիկ շատ
կան, բայց հասկացողներ էլ կան: Հաս-
կացողներն այսօր չնորհիւ «Նոր-Դար»-ի
գիտեն, որ Ֆրանսիացի գրող Մարտէյլ
Պրէվոն գրել է «Իդէալիստի խոստովա-
նանք» գիրքը. նրանից յետոյ հրատա-
րակել է պ. Գ. Արծրունին իւր «Էվէլի-
սան»: Այդ «Էվէլիսայի» թէ միտքը և
թէ՛ այսպէս ըսելով շինութիւնը միևնոյնն
է, ինչ որ Մարտէյլ Պրէվոյի «Իդէալիս-
տի խոստովանանքը» անունները, դար-
ձուածքները փոխելով, մի փոքր դէս,
մի փոքր դէն ձգձգելով բանը չի փոխ-
ւում: Թէ Մարտէյլ Պրէվոյի գիրքը Գ.
Արծրունին «չէ կարդացել», դրանով էլ
բանը չի փոխւում: Ինչու է հաստատ
այն որ Էվէլիսան Մարտէյլ Պրէվոյի «Ի-
դէալիստի խոստովանանք» գրքի՝ զօ-
ւրդն փոխադրութիւն են անուանում:
Սպասում ենք աւելի դրական և
պարզորոշ բացատրութեան, որի վեր-
նագիրը պէտք է կրէ հետեւեալը:

ՈՉ-ԻԴԷԱԼԻՍՏԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

ՆՈՐ-ԴԱՐ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ «ԾԱՂԻԿ»

Կ. Պ. Խ. ի Մաղմիսա. — Ձեր ու-
ղածները զրկած էինք արդէն յանձնա-
րարեալ նամակով, երբ Ձեր մարտ 4-ի
նամակը ստացանք. փօստի ծախք եղած
է 4 1/2 զրշ. ուրեմն տակաւին պարտիք
1 զրշ.

Դ. Փ. Եօզղան. — Ձեր ուղածները
զրկուեցան:

Տ. Հ. Գ. յիգլիւր. — Ձեր ուղած գըր-
քերը զրկուեցան:

Յ. Պ. Մ. յԱրապկիւր. — Ձեր ուղած-
ները զրկուած էին արդէն. այս ան-
գամ զրկեցինք նաև «Ծաղիկ»ի պակաս
թիւերը:

Ն. Գ. յԱյնթապ. — Այդ երկու գու-
մարները գանձուած են:

Ս. Յ. Ե. ի Խարբերդ. — 16 զրոշ
կը պարտիք:

Մ. Հ. ի Քիւմսարի. — Ղրկեցինք:

Ա. Բ. ի Սուչովա. — Ղրկեցինք: Այդ
թուղթը մեր հրապարակի վրայ 8 զրշ.
կ'արժէ:

Ա. Յ. ի Մալկարա. — Ստացանք
Ձեր զրկած թարգմանութիւնը:

Ն. Ա. ի Տէգիզլի. — Ստացանք ձեր
նամակը. կ'սպասեմք Մ. էֆէնտիի նա-
մակին:

ՄԷՃԷԼԼԷԻ ԱՀԿԵԱՄԸ ԱՏԼԻՅԵԻ

Օսմանեան Քաղաքային Օրենագիրք

Թարգմանեց

Ա. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹՈԹՎԱՅԵԱՆ

Հատոր Ա. Բ. Գ. Ե.

ՄԷՃԷԼԼԷԻ Օսմանեան Տիւթուրին
էական ու կարեւոր մասն է որ իւր մէջ
կը բովանդակէ այն ընդհանուր սկզբ-
բունքներն ու օրէնքներն որոց համա-
ձայն կը վարին և կը լուծուին Հոգուգի
վերաբերեալ բոլոր դատերն: Այս կա-
րեւոր օրինագրքին հայերէն թարգմա-
նութեան հրատարակութիւնն որ հա-
տոր առ հատոր կը շարունակուէր, այ-
ժմ բոլորովին աւարտած է: Ամբողջ
գործը կը բաղկանայ հինգ հատորներէ,
որոց իւրաքանչիւրին գինն է 60 դա-
հեկան:

Հայերէն թարգմանութեան հանդէպ
գրուած է նաև բնագրին դժուարիմաց
լեզուին հայատառ արտասանութիւնն,
որպէս զի թրքախօս գաւառաց հայերն
եւս կարենան օգտիլ հայատառ և թըր-
քարարառ մասէն:

Կը գտնուի ամէն գրավաճառաց քով
և կեդրոնատեղին է հրատարակչին՝ Բ.
Մ. Պողաճեանի Կեդրոնական Գրատունը,
Չաղամագճըլար, Թիւ 59:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

Գ Ր Ա Դ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն (1)

Արխիսակէս Եպիսկոպոս Սեդրակեանի

«Ամուսնական Խնդիրներ» գրքին

վրայ,

Ի Բժիշկ Միսաք Արամեանէ

Այս ընդարձակ մեկնութենէն յետոյ՝ պարզ է, որ Գէորգ Դ-ը միայնակ չէր իւր հայեացքի մէջ և ոչինչ ըսած չէ, որ հակառակ լինէր առաքելական եկեղեցւոյ սկզբնական աւանդութեան ու անխոտոր վարդապետութեան թիւրքիոյ բոլոր հեղինակաւոր հայ եկեղեցականք նոյն հայեացքն ունին։ Բայց եթէ միևնոյն ժամանակ նոքա ևս կ'ընդունին ամուսնալուծութեան հնարաւորութիւնը քրիստոնեայի համար, կ'ընդունին ոչ որպէս բացարձակ հետեւողութիւն «Իրկչական և առաքելական պատուէրներէ խսկական իմաստի պարզութեան», այլինքն իբրև կանոն այդ պատուիրանաց սկզբունքով, այլ որպէս զարտուղութիւն, որպէս գիշտութիւն արտաքին հանգամանաց անհրաժեշտութեան, մի խօսքով որպէս գիշտութիւն մարդկային տկարութեան՝ իսկ և իսկ այնպէս, ինչպէս առաքելալը իւր կողմանէ գիշտութիւն ըրած էր երկրորդ ամուսնութեան համար. բայց ի հարկէ ո'չ առաքելալը և ո'չ նոցա շաւղին անխոտոր հետեւող եկեղեցին՝ այդ գիշտութիւնը բացարձակ պատուէր չէին համարել և ոչ ալ պատճառ՝ աւետարանական վարդապետութեան սկզբունքը, իդէալը նսեմացնելու։

Եթէ Սեդրակեան Սրբազանի ուշադրութենէն չվրիպէին այն անյաջող հանգամանքները, որոնք պաշարել էին հանգուցեալ հայրապետը, նա անպատճառ կը խոստովանէր, թէ այդ սպառնալից հանգամանաց մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ հոգեւոր պետի համար ուրիշ ելք չկար, բայց միայն հրատարակել թէ պոսկին անլուծելի է։ Կը ցուինք որ անկարող ենք պարզել այդ հանգամանքներն այստեղ... Այս միայն կարող ենք ըսել, որ Գէորգ Դ-ի կոնգրակն աւելի իմաստութեան թելադրութիւն էր, հովուական արթնութեան զգուշութիւն, քան թէ կամահաճութեան, ինչպէս Սեդրակեան Սրբազան կ'աշխատի ներկայացնել (1)։ Սեդրակեան Սրբազան չարաչար կը սըխալի նաև կարծելով թէ՝ ամուսիններ-

(1) Հանգուցեալ Գէորգ Դ-ի կարգադրութեան մասին արդար և հիմնաւոր դատողութիւն ընելու համար, անպատճառ աչքի առջև ունենալու է նորա միւս հրահանգները, օրինակ՝ նշանադրութեան մասին արձակած կոնգրակը։

րու մէջ բորբոքուած գծութիւնը ամուսնալուծութեամբ կը վերջանայ։ Եթէ քրիստոնէական բարոյականի նպատակն է «հաշտութիւն», «ի մարդիկ հաճութիւն», Գէորգ Դ-ի հուշակած գրութեան մէջ հաշտութիւն հնարաւորութեան յոյսը երբէք չլքաներ զմարդ. բայց երբ պսակը կը լուծուի, խաղաղ կը կտրուի նաև այդ յոյսը։ Սեդրակեան Սրբազան թող կարգայ նաև՝ քրիստոնէական ամուսնութեան մասին՝ հուշակաւոր Դանիմարքացի աստուածաբան և բարոյախօս Մարտինսէն Եպիսկոպոսի հեղինակութիւնը ուր պիտի գտնէ իւր մոլոր վարդապետութեանց հիմնաւոր հերքումը։ Սեդրակեան Սրբազան լաւ կ'ընէր եթէ փոքր ինչ մտածէր թէ որպիսի՞ հոգեւանական բացարձակ ճշմարտութիւն կը բովանդակէ իւր մէջ մարգարէական յայտնութիւնը։ «Շրթունք քահանային զգուշացին գիտութեան և օրէնս խնդրեցին ի բերանոյ նորա»։ Իսկ այդ շրթունքին խնդրելի օրէնքն է՝ Զկին մանկութեան քոյ մի թողուր, զի նա է ամուսին և կին ուխտի քոյ» (Մաղաք)։

Սեդրակեան Սրբազանը մի կարգ ամուսնալուծութեանց վերաբերմամբ դիւանական վճիռներ յառաջ կը բերէ թուով քսանութէկ, քաղուած՝ Շուշիի և Թիֆլիսի Առաջնորդարանաց դիւանական արձանագրութիւններէն, որոց բոլորին ալ պատճառն է սակայն ամուսնական անհաւատարմութիւնը։ Այդ խնդիրներէն մեզ շատ լաւ ծանօթ է ապարադդ Ա. ի խնդիրը լուսահոգի Մատթէոսի օրով, որովհետեւ նորա մասին եղած դիւանական բոլոր գրութիւններն մեր ձեռքէն ելած են։ Ծշմարիտ է, այդ խնդիրն այնպէս, ինչպէս որ Սեդրակեան Սրբազանը ներկայացուցեր է, խիստ հետաքրքրական է. բայց աւելի հետաքրքրական է նորա ծածկուած կողմը (1)։

Երկրորդը, որ նոյնպէս նշանաւոր է իւր դիւանական ելեէջներով՝ Գ...

(1) Այդ կողմի պարագայական մանրամասնութիւնը շատ լաւ յայտնի պիտի լինի Դաւթեան Արխիտակէս Սրբազանին, որ այժմ Սինոդի անդամ է. նա լուսահոգի կաթողիկոսի քարտուղարն էր այն ժամանակ, իսկ աշխարհականներէն՝ Պ. Գր. Իզմիրեանցին, որ հաշտարարի պաշտօն կը վարէր այդ գործի մէջ. խնդիրը շատ կնճառալի էր և հրատապ. կրքերը խիստ բորբոքուած էին. նշանաւոր է այդ գործի մէջ նոյն ժամանակի հասարակական գործիչներու կողմէն դէպ ի հայրապետական Գահակալը ցոյց տրուած անպայման հաւատարմութիւնը. նոցա խոհեմութիւնն էր պատճառը որ վէճը օրինաց գծած շաւղէն չչեղելով, դաւադիրներու նենգութիւնը խորտակուեցաւ։

Գ...ի ամուսնալուծութեան խնդիրն է, (208 եր.)։ Բայց ինչպէս կ'երեւի, Սեդրակեան Սրբազանը այդ գործը հրապարակ հանելով կամեցել է ցոյց տալ, թէ ինքը որչափ նախանձախնդիր է հայրապետական գահի իրաւասութեան և սպասաւոր իւր առաջնորդական հովուական պարտաւորութեանց։ Շատ կարելի է...

Վերջացնելով մեր «Նշմանքներ»ը, հարկ կը համարինք կրկնել, թէ Սեդրակեան Սրբազանի ներկայացուցած անտեղութիւնները, անհեթեթութիւնները ամուսնական հասի-չհասի և ամուսնալուծութեան վճիռներու վերաբերութեամբ, իրենց պատճառն առած են ո'չ թէ կանոններէն, այլ մեր մէջ մուտ գտած բարոյական զեղծումներէն և հովուական թուլութեան։ Որպէս զի այս անտեղութիւնք վերնան, հարկ է բուն պատճառն արմատախիլ ընել, իսկ սորա համար պէտք չկայ ընդհանուր եկեղեցական ժողովի, այլ հարկ է որ եկեղեցական պաշտօնեայիներն արիւնքան իրենց պաշտաման մէջ և իրենց բանիւ ու օրինակով անդրդուելի հաստատեն ժողովուրդի սրտի մէջ քրիստոնէական բարոյականի ողջախոհութիւնը. այս կերպով միայն կը խլուին բարոյական վեղծումները և հնար եղածին չափ հոգեւոր ատեաններէն կը պոկուին այդպիսի խնդիրները և ըստ այնմ կը վերջանան անտեղի վճիռները։ Եկեղեցականք պէտք է աշխատին իրենց փոքրիկ հօտի գիտակցութեան մէջ պատուաստել սա սկզբունքը թէ ազգաշաղկապութիւնը ամբարշտութիւն է, և թէ ամուսնալուծութիւնը՝ ուխտագրութիւն է Առտուծոյ և եկեղեցւոյ առաջ։ Որքան եկեղեցական հովուութիւնը կ'աշխատի հաշտութիւն հաստատել այն դէպքերու մէջ, ուր օրէնքը կը թոյլատրէ ամուսնալուծութիւն՝ այժմ ընդունած մոքով, այնքան նա կը մօտենայ քրիստոնէական բարոյականի իդէալին, այնքան կը նպաստէ նա քրիստոնեայի կատարելութեան և ազգաշինութեան գործին, որուն սկիզբը և կատարածը՝ ընտանեկան կեանքի ամրութիւնն է, ամուսնական կենսակցութեան համերաշխութիւնը, սէրը և պարտաւորութեան գիտակցութիւնը։ Մեր այս համոզման մէջ հաստատուել ենք ոչ միայն վերադիտողութեամբ, տեսական ուսմամբ և քրիստոնէական բարոյականի հաւատարիմ ու աննախանձ ուսուցիչներու դասերով, այլ մեր սեպհական նկատողութիւններով։ Որպէս քսան տարուայ բժիշկ, մեր պետական ծառայութեան մեծ մասը դատաստանական-քստիկական բժշկի պաշտօն վարելով և մօտէն ճանաչելով այն աշխարհը, որ հա-

ստորակութեան կողմէն անարգութեամբ արարածներու, հասարակական կանոնացախարհէն է, տեսել եմ, որ եթէ խիղճը մարդի մէջ ամենեւին մարած չէ և յորդորեցուցիչ ձայնը անխափան է, — մեզաւորի դարձը և ապաշխարութիւնը և միեւնոյն ժամանակ գծտուած ամուսնոց հաշտութիւնը աներկեւան է:

Նոր էլ մտել բժշկական ծառայութեան մէջ, երբ տեսայ որ իմ տեսչութեան տակ գտնուած անառակ կանանց մէկը հայ է, մի գեղեցիկ կին, և ինչպէս կ'ըսեն՝ մեռնող տակաւին երեսէն չէր սրբուած: Դորա ամուսինը հոգեւոր իշխանութեան խնդիր էր տուել պատկառածութեան համար վառն բանի պոռնկութեան: Սկսուելէր քրնութիւնը: Կարելի էր արդեօք այդ քննութեան հետեւանքի մասին տարակուսիլ. գործը շատ պարզ էր. ամբաստանուած կինը կը գտնուէր հասարակաց կանանց պաշտօնական ցուցակի մէջ, դեղին տոմս ունէր և բազմութիւն սեղեխներ: Բայց մի քանի յանդիմանական խօսք այդ կնոջ և մի քանի ուրտարուղի յորդոր վիրաւորութեամբ ամուսնոյն՝ քրիստոնէական ներդրամութեան մասին, բաւական եղան անառակ կինը դարձի բերելու. ապաշխարեց և ամուսնոյն ներդրութեան արժանանալով, մտաւ օրէնքի տակ և ահա՛ տասն տարիէն աւելի է որ սիրով և խաղաղութեամբ կ'ապրին: Միայն այս չէ մեր նկատողութեանց արդիւնքը: Ի Բաղու քաղաքային բժիշկի, ոստիկանական-դատաստանական բժշկի պաշտօնը վարելով, մեր տեսչութեան տակ ունեցել ենք երկու հարիւրէ աւելի հասարակաց կանայք, որոնցմէ 15ը հայ էին. սոքա գրեթէ կիսով չափ թողուցին այդ անարգութիւնը շնորհիւ պ. Գ. Ասլանեանի. որոնք այդ ունէին՝ հաշտուեցան, որոնք ազատ էին՝ ամուսնացան իրենց սիրականաց հետ:

Այս ամենէն յետոյ, պէտք է վերջապէս ըսել նաև թէ՛ անարդար ամուսնութիւնը կը զրկէ ընտանիքը տատուածային օրհնութենէ: Որդիքը՝ իմանալով որ իրենց ծնողքը չեն յարգել օրէնքը, իրենք ալ հեշտութեամբ այն գաղափարին կը յարին թէ իրենք՝ իրենց ծնողքէն աւելի օրինաց սրտակաւ կալու հարկ մը չունին: Բարոյական անկումը, զոր սկսած են ծնողք, կը շարունակեն որդիք և յաջորդք: Ազգը կը բազկանայ ընտանիքներէ. եթէ խանգարուած են բաղադրիչ մասերը, խանգարուած է և ամբողջը: Ուստի բոլորովին բնական է ամուսնութեան և ըզգաստութեան օրինաց եղծումէն սպասել այն հասարակական աղէտները, զոր կը նկարագրէ մարգարէն. «Անէծք և

ստութիւն և շնութիւն հեղեալ ի վերայ երկրի և արիւն ընդ արիւնս խառնեն, վասն այսորիկ սուգ առցէ երկիր և նուազեցցի ամենայն բնակչօք իւրովք»: (Ովս. Դ. — 2—3): Երբ որ Հռոմայեցի կանայք պատրաստ էին մեռնիլ ամուսնական սրբութեան համար, Հռովմը կ'աճէր և կը զօրանար, բայց երբ նա խորասուզուեցաւ ամուսնական սրբութեան ներհակ ապականութեան և մեղաց մէջ, նա նուազեցաւ անկիրթ, բայց այդպիսի պականութիւններով իւր բնութիւնը չապականած բարբարոսներու առաջ, չնայելով որ կ'իշխէր գրեթէ ամբողջ տիեզերքին: Մեզ այլ ևս ոչինչ կը մնայ ըսել, եթէ ոչ կնքել մեր «նշմարներ»ը այն խօսքերով, որոցմով սկսանք. «Եթէ ենթադրենք անգամ որ այս կամ այն պետութիւնը կամ քաղաքացիական հասարակութիւնը կը գտնուի քայքայման վիճակի մէջ և բարոյականութիւնը խիստ ընկած է, սակայն քանի որ եկեղեցին կը քարոզէ մաքուր աւետարան և ժողովուրդը ունի նորա ձայնին, և քանի որ ընտանեկան կեանքն անարատ է» — մինչև այն ժամանակ կազմալուծուող ժողովրդի վերածնութիւնը գրաւական ունի: Քայքայումն անխուսափելի է, երբ կ'սկսին քայքայուիլ եկեղեցի ու ընտանիք, և կազմալուծութիւնը կը հասնի այն աստիճանին որ այլ ևս անհնար է վերանորոգութիւնը»:

Վ Ե Ր Ջ

ԱՆՑԵԱԼԻՑ ՄԻ ՅԻՇԱՍԱԿ

(Շար. նախորդ թիւէն և վերջ)

Խօսքը փոխելով դարձրի ժամանակակից գրողների վրայ, Այս բանում Պ. Յ. Մէլիք-Յակոբեանի կարծիքը այնքան էլ յուսահատական չէր:

Գլխաւոր միջնորդական բանն այն է, ասաց նա, որ ասպարիզում տիրապետող գրական լեզուն դարձաւ աշխարհաբառը, զոր կարողանում է հասկանալ ժողովուրդը: Լեզուաբանական տեսակետից եթէ քննելու լինինք, կը գտնենք որ մեր արդի լեզուն դեռ շատ կարօտ է մշակութեան: Արարատեան բարբառը մեծ առաւելութիւններ ունի ազգայն աշխարհաբառ լեզուի հիմքը կազմելու. բայց նա կատարեալ և ընդհանուր լեզու կարող չէ դառնալ, եթէ իւր մէջ չլուծէ Տաճկահայոց և Պարսկահայոց բարբառներից ընտիր, հայ լեզուի հոգուն սեփական բառերը, դարձուածքներն ու ոճերը: Այս երեք հայ բարբառների ձուլումն անհրաժեշտ է, ապագայում մշակուած և ճիշտ լե-

զու ունենալու համար: Ամենից առաջ խօսելով լեզուի մասին, միտք ունէի ապացուցանել, թէ մշակուած լեզուն մեծ գործ է կատարում վիպագրութեան գործում, որով կարելի է լինում քիչ բառերով ու կարճ խօսքերով արտայայտել շատ միտք և բարձր գաղափարներ, որ կազմում է գրականական յաջողութիւնը:

«Գրականութեան արտաքին զարգացման մասին խօսելուց յետոյ, դառնանք նրա ոգոյն: (Նա միշտ ակնարկում էր վիպագրութեան մասին, որ իւր մասնաճիւղն էր): Գրականական ոգի չունինք մենք, կամ աւելի պարզ ասել, մեր գրականութիւնը ոգի չունի, և այն ոչ նրա համար որ կարող չենք կամ չենք կամենում ունենալ — այլ նրա համար որ կեանքը անկարող է մատակարարել առատ և որոշ նիւթ գրչի համար:

— Ի՞նչպէս. միթէ մեր կեանքը աննիւթ է, դիտմամբ ժալտելով հարցուցի ես, հարցը աւելի պարզելու մտքով:

— Ո՛չ, կեանքը աննիւթ չէ և կարող չէ լինիլ, բայց որովհետեւ կեանքի զանազան երևոյթները ու պայմանները մասնազրկուած են ուսումնասիրուած չեն և անյայտ են մեր մտքին ու բարեմասն — այս դէպքում նա ներկայանում է մեզ որպէս աննիւթ...»

«Օրինակ, գրիչ եմ առնում գրելու, գրում եմ, գործը յառաջ է գնում, բայց երբ հանդիպում եմ նկարագրածս կեանքի իրաւարանական, հոգեբանական մասին, գրիչս ակամայ կանգ է առնում: Եւ ի՞նչպէս յառաջ գնար, մինչև ոչ իրաւարան, ո՛չ հոգեբան եմ, սակայն պէտք է լոյս աշխարհ հանելիմ գործի այդ յատկութիւնները: Տարօրինակ կ'ացութիւն է. ժողովրդի զանազան յատկութիւնների ուսումնասիրութեան գործը թողուած է երեսի վրայ, մենք չունինք այդ կարգի աշխատութիւններ, որոցմով օգտվում են եւրոպայի թէ՛ գրողները և թէ՛ ընթերցողները... Այս առաջին պատճառն է մեր գրական յետադիմութեան: Ահա և երկրորդը. — որովհետեւ մեր մասնագէտ ուսումնականները իւզալի պաշտօնների և իւզալի ամուսնութիւնների յետեւից ընկած, ժողովրդի զանազան յատկանիշները ու սովորութիւններն ուսումնասիրելու գործի վրայ ամենեւին ուշադրութիւն չեն դարձնում, նոցա այս պարտականութիւնը բնականաբար ծանրանում է վիպասանի վրայ, որով վէպը պարզ վիպասանական լինելուց չեղուելով դառնում է մի տեսակ վիպա-ուսումնասիրական գրուածք, սակայն երկուսի գլխաւոր յատկութիւններից ևս զուրկ:

Հէնց այն ժամանակ էլ ես համարում էի նորա հետ, թէ ժողովրդի կեանքի մանրամասն ուսումնասիրութեան պակասութիւնը մեծ արգելք է դառնում վիպական գրութեան յառաջագիւտութեան, ուր վիպասանը փոխանակ իւր գծած պատկերներին կենդանութիւն տալու, ստիպուած է լինում թաղուիլ մի ամբողջ ժողովրդի յատկութիւնների ծալքերի մէջ, որից յաջող դուրս գալ մինչև այսօր չէ կարողացել ոչ մի վիպասան:

Խօսքը նորէն փոխեցի: Կ'ուզէի գիտնալ թէ որպիսի գաղափար ունէր նա ժամանակակից լրագրութեան մասին: Ժամանակը սուղ էր, կարծես մի նախազգացում կ'ըսէր ինձ թէ այդ տեսակցութիւնը վերջինն էր (այդպէս էլ եղաւ), որի համար աշխատում էի լսել նրա կարծիքները այն բոլորի մասին, որոնցով հետաքրքրվում էի: Նա ասաց:

— Սկզբներում «Մշակ»-ի մասին ես լաւ գաղափար ունէի, և այդպէս էլ էր, որովհետեւ լուսավորութեան կարծեւում, որպէս կոչում էր ինքն իրեն, նորա շուրջը ժողովուրդ էին նոյն ժամանակուայ ամենաընտիր ուժերը... «Մշակ»ը այդ ժամանակ կրթեց ժողովրդի մտաւոր, բարոյական և անտեսական գեղացւոյնը, զարգացնել ջանաց ժողովուրդը, բայց չունեցաւ առաջնորդողի գլխաւոր յատկութիւնները, որ նրան մղէր դէպ ի յառաջագիւտութիւն. ժողովուրդը, քնաթաթաւ աչքերը սրբելով երբ առջեւը չգտաւ յառաջագիւտութեան ուղին, ստիպուեցաւ մի քանի քայլ էլ յետ գնալ... Որովհետեւ այդ թերթ չմնաց միեւնոյնը. նա կամաց կամաց մերկացաւ իւր դիմակը, որի տակ որպէս մի սոսկալի հրէշ փայլեց նորա «ես»ը: «Ընտիր ուժերը ցրուեցան և «Մշակ»-ի խմբագիրը մնաց միակ, որպէս իւր թանկագին զարդերից մերկացած մի կմախք, որից զգուշացնում յետ քաշուեցան և ընթերցողաց մեծ մասը: Ես համակրում եմ նորա անցեալը իւր ժամանակակից թերթերի համեմատութեամբ, իսկ նորա ներկան հաւասար է մի մեծ գերօրի, նման թիֆլիսի դայրային, շուրջը բոժոժների տեղ շարուած Գ. Արծրունւոյ և նորա մի խումբ անբաժան արբանեակների կուպիտ «ես»երը:

— Իսկ ապագա՞ն... հետաքրքրութեամբ հարցուցի ես:

Մէլիք-Յակոբեան շարժեց գլուխը և փոքր լուծութիւնից յետոյ պատասխանեց.

— Նորա ապագան կը մնայ նոյնը, ինչ որ է ներկայն, եթէ միշտ կը մնայ նոյն խմբագրի և աշխատակիցների ձեռքում...:

Սոյն կարծիքը միմիայն խօսակցի սեփականութիւնն էր, այս համոզմամբ խօսում էին և այն ամենքը, որոնք լրագրութիւնը ըմբռնում էին իւր սրբազան կոչմամբ և ո'չ խմբագրի կամ այս ու այն համբալի աշխատակցի փառամով ձգտումներով:

Ապա՝ նա խօսեցով «Փորձ»-ի ու «Արձագանք»-ի մասին, եզրակացուց թէ «Փորձ»ը մի տաղտկալի և անբովանդակ թերթ էր, բաց առեալ մի քանի նշանաւոր աշխատակիցների գրութեանքները, որոնք պարբերաբար հրատարակվում էին նորա էջերում: Իսկ «Արձագանք»ը առաջին վիժմունքն է:

— Որովհետեւ մենք չունինք ամատարար, որի պակասութիւնը այնքան ըզգալի է մեզանում, գոնէ «Արձագանք»ը՝ որպէս շարաթաթերթ՝ կարող էր յառաջագիւտել ու մեծ ծառայութիւն մատուցանել մեր դրականական աշխարհին, եթէ նա խմբագրութիւն արժանատւորապէս... բայց ինչ էլ որ է, ես աւելի «Արձագանք»-ի ապագայի վրայ յոյս ունիմ, քան «Մշակ»-ի:

Կարճ լուծութիւնից յետոյ ես հարցրի «Նոր-Դար»-ի և «Աղբիւր»-ի մասին: Նա վերջինիս անունն անգամ չկամեցաւ յիշել. այսքանս միայն ասաց, թէ մանկական թերթի խմբագիրը պէտք է որ օժտած լինի մասնագէտ և փորձուած հօր կամ մանկավարժի բոլոր ձիրքերով ու յատկութիւններով, այն ինչ այդ թերթի խմբագիրը ինքը երեխայ է, այսինքն աւելի երեխայական յատկութիւններ ունի քան խմբագրի արժանաւորութիւնը:

«Գալով Պ. Սպանդարեանի «Նոր-Դար»-ին, — կարելի չէ բացարձակ կարծիք յայտնել: Նա դեռ նոր է, մի երկու տարի է որ լոյս աշխարհ է եկել. որպիսի սկզբունքով ու ուղղութիւնով էլ առաջնորդվում լինի նա այսօր, — այդ պէտք չէ որ նորա հիմնական ուղղութիւնը համարինք, աչքի առաջ ունենալով որ խմբագրի հիմնական ուղղութիւնը կարող է իւր առաջին քայլերում բաղկանալ անպատկեր արգելքների և չընթանալ վաղօրօք գծած ուղղութեամբ և կարող է սրա հակառակը լինել. ուրեմն կանխապէս կարծիք յայտնել անկարելի է: Սակայն պէտք չէ ուրանալ որ «Նոր-Դար»ը ունի աւելի ընտիր, մշակուած և սահուն լեզու քան մեր միւս բոլոր թերթերը. «Նոր-Դար»-ի այդ ձիւղը ուշադրութեան արժանի է, և աւելի քան ամենայն խնամքով ընտրած և ժողովրդի ճաշակին յարմարեցրած նիւթերի ճոխութիւնը չէ ունեցել ոչ իսկ «Փորձ»ը իւր ամբողջ թանձրութեամբ: Գրոնիկոնի բաժինը նոյնպէս

վատ չէ. այս բաժնում երբեմն կարգացել եմ այնպիսի տեսութիւններ, որ ուրիշ թերթերը զետեղում են իրենց խմբագրականների բաժնում, և այն իրենց գլխի մեծութեամբ տառերով: Անաչառութիւնը պարտաւորեցնում է մեզ խօստովանել որ «Նոր-Դար»ը իւր առաջին հրատարակուած օրից դարձել է որպէս փուշ միւս թերթերի աչքում: սակայն բանակալիների ժամանակ ես միշտ նկատել եմ նորա մէջ լրջութիւն, բուն հարցին վերաբերեալ փաստեր և ոչ անձնական կեղտոտ վիրաւորանք, որպէս անում են նորա հակառակորդները: Բանակալի ժամանակ անձնաւորութիւնը շօշափել է, կը նշանակէ խնդիրը պաշտպանելու չափ փաստերի պաշար չունենալ. — իմ կարծիքը այս է, թէ եւ մի դաս նորեւելիներ այդ հայհոյանքը համարում են միակ յաղթանակ... Սպանդարեանի վեկը ազգի և եկեղեցւոյ սէրն է:

Մի քանի միջանկեալ խօսակցութիւնից յետոյ, խօսք բացի վաճառականութեան վրայ: Լսելով նա այս բառը, խնդաց:

— Ներկայ ժամանակում և ներկայ պայմաններում, այդ ամենն ուշադրաւ և անհրաժեշտ պարագանքի վերացականը — վաճառականութիւնը համարում եմ խաբեայութիւն, որպէս համարել եմ միշտ, երբ առիթ եմ ունեցել այդ դասակարգի մասին գրել կամ խօսիլ. — իսկ նորա իրականը — վաճառականը — որպէս մի պարզ միջնորդ: Մենք վաճառականներ չունինք, նրանք, ինչպէս ասացի, միջնորդներ են գործարանատիրոջ կամ հում նիւթ արտադրողների ու սպառող ժողովրդի մէջ: Մենք վաճառականութիւն չունինք, նա կորցնելով իւր բարձր և պատկառելի անունը, դարձել է լոկ խաբեայութիւն: Հարկաւ՝ վաճառականութիւնը խաբեայութեան փոխողը Հայերը չեն, հետեւապէս մեղադրելի էլ չեն: Հացի խնդիր է, որ ներկայ պայմանների մէջ աւելի սոսկալի է քան երբ և իցէ: Գոյութեան կռիւում ամեն մէկը աշխատում է յաղթող հանդիսանալ կամ պաշտպանել իւր գոյութիւնը: Եթէ ընդհանրապէս այդ կռիւը մղվում է խաբեայութեամբ գինեալ, ուրեմն ի՞նչով պէտք է գինուի հակառակորդը: Գործարանատիրոջ խաբում է իւր յաճախորդին, սա խաբում է իրենին, մինչեւ որ կարգը հասնում է Հայ վաճառականին, որով խաբուած Հայ վաճառականն էլ ստիպուած է լինում խաբելու իւր յաճախորդներին և այսպէս շարունակ:

«Սակայն պէտք է հարուածել, պէտք է թոյլ տալ որ այդ տարափոխիկ հի-

ւանդութեամբ վարակուի ապագայ սերունդը: Այսպէս անուամբ են Եւրոպացիք, այսպէս պէտք է անենք և մենք, որով սակաւ առ սակաւ վաճառականութիւնը կ'ստանայ իւր առաջին նշանակութիւնն ու կոչումն...:

Դեռ շատ բաների մասին պէտք է հարցնել իրեն, սակայն այդ պահուն մի քանի ինձ անծանօթներ մօտենալով, ընդհատեցին մեր խօսակցութիւնը:

Ես բաժանուեցայ և այդ եղաւ վերջին բաժանումն: Արտասահմանումն էի, երբ լսեցի իւր ցաւալի մահը...:

Ա. Մ.—Եսն

ՀՈՌԼԱ

Կը յիշուի անշուշտ թէ վերջերս, ֆրանսական արդի գրականութեան մեծագոյն ներկայացուցիչ Կի տը Մօբասան, տենդայով տաքնապի մը միջոցին անձեռնով մը կոկորդը կարելով անձնասպանութիւն փորձեց. բարեբաղդաբար ճարտար բժշկաց անմիջական խընամոց չնորհիւ, մօտալուտ վախճանէ մը իւր կեանքը փրկուեցաւ: Այլ մտաւորական հիւանդութիւն մը որ ժամանակէ մը ի վեր կը նշմարուէր այդ մեծ վիպասանին վրայ, առաւել ևս սկսաւ սաստկանալ սոյն դէպքէն ի վեր:

Գերազանց հատնարի վիպակներու և իմաստասիրական բազմաթիւ վէպերու այն անմահ հեղինակն յարատեւ մտատանջութեան և վրդովման մէջ կ'եղէր. իւր գլուխը շարունակ գործող հազուագիւտ գլուխներէն լինելով, պահ մը հանգստեան պէտք ունէր որոյ սակայն չէր ուզեր ենթարկուիլ. ասկէ յառաջ եկաւ իւր ուղեղային խանգարումն որ մինչեւ անձնասպանութեան միջոց զինքն և յիմարաբուժից առօրեայ խնամոց առարկայն ըրաւ:

Ֆրանսական մամուլը, ջերմապէս զգածեալ հեղինակին այդ ծանր կացութեան, անձկանօք կ'սպասէ ողորենելու նորա ապաքինումը: Գրական աշխարհը կ'երագէ այն օրն յորում, ամէն կապանքներէ զերծ, նա վերստին թոյլ պիտի տայ իւր վրայ հիացողաց՝ սքանչանալ իւր գրչին նորանոր արտադրութեանց վրայ: Մաղթեմք և յուսամք:

Կ'ըսուի թէ Կի տը Մօբասան ժամանակէ մը հետէ սրտնեղութենէ տառապելով, կ'զգար թէ բան մը կը ծանրանայ իւր հոգւոյն վրայ և հանգիստ չթողուր իրեն. իւր շուրջը գտնուած առարկայներն իսկ ցաւ կը պատճառէին իրեն:

Հեղինակին «Հորաւ» վերնագրի ներքեւ «Մաղիկ»ի Արդ թուոյն մէջ մեր

թարգմանած վիպակը զինքն հիւծող ախտին առաջին ապացոյցներէն մին լինել կը կարծուի: Այսու նկատմամբ հետաքրքրաշարժ թուեցաւ մեզ «Ծաղիկ»ի ընթերցողաց ներկայացնել մի քանի հատուածներն եւս Հոռլա վերտառեալ իւր մէկ օրագրին յորում կ'ենթադրուի ընդհարել յառաջաբան մը իւր մտաւոր կացութեան, որ աւագ այնքան ահուելի վախճանի մը յանգած է:

21 Մայիս. — Գանի մ' օրէ ի վեր ջերմ ունիմ. տառապանք կ'զգամ, կամ, աւելի ճիշդը, տխուր եմ:

Ո'ւստի են այս խորհրդաւոր տպաւորութիւններն որք մեր երջանկութիւնը վատութեան կը փոխեն և մեր վստահութիւնը կասկածանաց: Կարծես թէ օդը, անտեսանելի օդը անձանաչելի զօրութիւններ կը պարունակէ որոց խորհրդաւոր մերձաւորութիւնը կ'զգամք: Ուրախ, գուարթ կ'արթննամ, երգելու բուռն տենչիւ: Ի՞նչու այսպէս: — Գետին երկայնքը կը պտըտիմ և կարծ չըջագայութենէ մը վերջ յանկարծ բնակարանս կը դառնամ, յոյժ վշտակիր, որպէս թէ դժբաղդութիւն մը սպասէր ինձ հոն: Ի՞նչու այսպէս: — Յուրտ սարսուռ մ'է որ մորթս քերելով ջիւերս դըրդած և հոգիս նսեմացուցած է: Արդեօք ամպոց մշտափոփոխ ձևն և կամ լուսնոյ առարկայից գոյնն է՞ որ շարունակ աչացոյ առջեւ տեսնուելով, մտածողութիւնս խանգարած է: Ո'վ գիտէ, ինչ որ զմեզ կը շրջապատէ, ինչ որ կը տեսնեմք առանց գիտելու, ինչ բանի որ կը հպիմք առանց ճանաչելու, ինչ որ կը շոյալեմք առանց ձեռամբ զննելու, ամէն ինչ որոց կը հանգալիմք առանց զայնս որոշելու, մեր վրայ, մեր գործարանաց վրայ և անոնց միջոցաւ մեր գաղափարաց վրայ, նոյն իսկ մեր սրտին վրայ անմիջական, զարմանալի և անբացատրելի ազդեցութիւններ ունին:

Ո'րքան անթափանցելի է մեզ Անծանօթին այս գաղտնիքը: Ձեմք կարող զայն հետազօտել մեր ողորմելի ըզգայարանաց միջոցաւ, մեր աչերով՝ որք չեն կարող նշմարել ո'չ ամենափոքրն, ո'չ ամենամեծն, ո'չ մերձաւորագոյնը, ո'չ հեռաւորագոյնը, ո'չ աստղի մը բռնակիչները, ո'չ իսկ ջրոյ կայակի մը բռնակիչներն... մեր ականջներով՝ որք զմեզ կը խաբեն այնու զի հնչուն խաղերով մեզ կը հասցնեն օդին թրթռումներն: Յուշկապարիկներ են անոնք որք այդ ճօճումն աղմուկի փոխելու հրաշքը կը գործեն և այս փոփոխմամբ ծնունդ կուտան երաժշտութեան որ բնութեան համը տատանումը հնչուն կ'ընծայէ... մեր հոտոտելիքով՝ որ արդէն նուաղ

զօրեղ է քան շանը... մեր ճաշակելիքով որ այն ինչ կարող է զանազանել գինւոյ մը տարերքը:

Ահ, թէ ունենայինք ուրիշ գործարաններ որք ի նպաստ մեզ զանազան հրաշքներ կատարէին, ի՞նչեր չպիտի կարենայիք մերկացնել մեր շուրջը:

26 Մայիս. — Արդարեւ հիւանդ եմ, մինչդեռ անցեալ ամիս այնքան առողջ էի: Ձերմ ունիմ, սաստիկ ջերմ մը, կամ, աւելի ճիշդը, տենդային ջրառութիւն մը որ հոգիս մարմնոյս ցաւերուն չափ կը տառապեցնէ: Շարունակ սպառնալից վտանգի մը ահուելի ազդումը կը կրեմ, մօտալուտ դժբաղդութեան մը, կամ մահուան երկիւղն, այն նախաըզացումն ո'չ անշուշտ հարուածն է տալաւին անծանօթ վշտի մը որ սկսած է բողբոջիլ մեր արեան և մարմնէն:

28 Մայիս. — Ամենին չկարենալով քնանալ, բժշկիս խորհուրդ հարցնելու գացի և անկից կը դառնամ. բազկերակս արագ գտաւ, աչերս շատ բաց, ջիւերս թրթռուն, բայց առանց ո'չ և է զարհուրեցուցից երևոյթ մը տեսնելու: Հրամայեց որ քուէ ընեմ և պոսիւն քը բօքսիթով առնեմ:

29 Մայիս. — Բնաւ փոփոխութիւն չկայ: Վիճակս արդարեւ դառն է: Գանի մօտենայ իրիկունը, անըմբռնելի մըտատանջութիւն մը զիս կը պաշարէ, որպէս թէ գիշերն ինձ վերապահէր ահուելի վտանգ մը: Կ'ընթերեմ արագ օրէն, յետոյ կը փորձեմ կարգաւ, բայց բառերը չեմ հասկնար, հազիւ թէ տառերը կը զանազանեմ: Կ'սկսիմ քայլել սրբահիս մէջ խառնակ և անյաղթելի երկիւղի մը ճնշման ներքեւ, երկիւղ քնոյ, երկիւղ անկողնոյ:

Ժամը տասնի միջոցները սենեակս կ'եղնեմ: Հազիւ թէ ներս կը մտնեմ, դրանս բանալին երկիցս կը դարձնեմ և նիգերը կը դնեմ. կը վախնամ... չգիտեմ ի՞նչ բանէ...: Ծարդ և ո'չ մէկ բանէ կը սոսկայի...: Մինչ այժմ դարաններս կը բանամ, անկողնոյս ներքեւ կը նայիմ... Կ'ուռնկերեմ... ուշադրութիւն կը դարձնեմ... չգիտեմ ի՞նչ բանի...: Զարմանալի չէ որ պարզ անհանգստութիւն, գուցէ արեան թեթեւ համախուռութիւն մը, մեր կենդանի կազմածին յանջալիս թերի և դժուարակնճիւ գործարանաւորութեան մէջ ամենաջնջին շիթութիւն մը, կարենայ մեղմաղձոտ ընել աշխարհիս ամենէ զուարթ անձը, և վստասիրտ մը՝ ամենէ քաջասիրտն:

Այնուհետեւ աչերս կը փակեմ և կ'սպասեմ քնոյ, որպէս թէ գահիճի մը:

Կը քնանամ — երկար ատեն — երկու երեք ժամ: Ետոյ երազ մը, ո'չ, մըդ՝ ճաւանջ մը կը պրկէ զիս: Կ'զգամ թէ

պառկած եմ և կը ննջեմ... կ'զգամ և գիտակցութիւն ունիմ... կ'զգամ նաև թէ մէկը կը մօտի ինձ, կը դիտէ զիս, ձեռամբ կը գննէ զիս, անկողնոյս մէջ կ'ենէ, կը ծնրադրէ մարմնոյս վրայ, վիզս ձեռացը մէջ կ'առնու և կը սեղմէ... կը սեղմէ պինդ մը... բոլոր զօրութեամբը զիս խեղդամահ ընելու համար:

Իսկ ես, անկողնոյս մէջ կը թըրպըրտամ, կանչկանդեալ այս անապո-րոյն զօրութեանն որ տեսիլներու մէջ զմեզ կը ջլատէ. կ'ուզեմ գոչել, — չեմ կարող. չնձառաւաճ սոսկալի ջանքերով կ'ուզեմ դառնալ, մէկ կողմ վանել այդ էակը որ զիս կը ճմլէ և կը խեղդէ, — չեմ կարող:

Եւ յանկարծ կը զարթնում խեղցը-նոր և քրտնաթոր: Կը վառեմ ճրագս. ոչ զոր կը տեսնեմ: Առանձին եմ:

Այս ճգնաժամէն վերջ որ ամէն գի-շեր կը նորոգի, վերջապէս հանգիստ կը ննջեմ մինչեւ արշալոյս:

2 Յունիս. — Վիճակս առաւել եւս դառնացաւ: Ե՛ք ունիմ: Պոստիւլը ազդեցութիւն չըրաւ, տուեցրը անօգուտ եղան: Անցեալ օր, արդէն յագ-նած մարմինս առաւել եւս տկարացնե-լու համար, գացի շրջիլ Ռուսմալի ան-տառը:

Նոյն հետայն սարսուռ մը պատեց զիս, ոչ թէ ցուրտի, այլ սրտնեղու-թեան արտակարգ սարսուռ մը: Քայ-լերս փութացուցի, այս անտառին մէջ առանձին լինելու մոտաանջութեամբ, առանց պատճառի յիմարաբար վախ-նալով սոյն խորին առանձնութեան: Յանկարծ ինձ այնպէս թուեցաւ թէ մէկը քայլ առ քայլ կը հետեւէր ինձ այն-քան մօտէն, այնքան մօտէն որ մարմ-նոյս կը դպէր: Ընդոստ ետիս դարձայ: Ոչ զոր տեսայ. առանձին էի:

3 Յունիս. — Գիշերը շատ գէշ ան-ցուցի: Այժմ գիտեմ գաղտնիքը: Մարդկանց թագաւորութիւնը ա՛լ վերջացած է:

Եկած է նա որմէ կ'ահաբեկէին նա-խաստեղծ մարդիկ, նա զոր ի բաց կը մերժէին մոտաանջ կրօնաւորը, նա ո-րոյ հրաւէր կը կարգային կախարդը, մթին գիշերանց, առանց տակաւին զայն տեսած լինելու և որոյ՝ խուզարկու գիտնոց նախագգացմունք հողապայնե-րու, ոգիներու, հանձարներու, ըղձա-նոյններու, ձիւաղներու հրէշային կամ չնորհալից երեւոյթներ տուին: Այս ա-ռաջին արհաւիրանաց անմիտ յղացումնե-րէն վերջ, սրամիտ անձինք ևս զայն նախագգացին առաւել համազմամբ: Միսմեռ զայն գուշակած էր և բժիշկը արդէն տասն տարիներէ ի վեր շօշափե-լի իմն երևան հանած են նորա զօրու-

թեան բնութիւնը, դեռ ինքն՝ իւր այդ զօրութիւնն ի կիր չառած: Նոքա՝ այդ նորահաս աշխարհակալն իբր գէնք ու-նենալով, արդէն գերի մարդկային հոգ-ւոյն վրայ խորհրդաւոր կամեցողութեան մը իշխանութիւնը գործեցին: Եւ այս՝ անուանեցին քնէածուծութիւն, թելադ-րութիւն, մագնիսականութիւն և չգի-տեմ դեռ ի՞նչ: Տեսայ որ այս ահաբեկի զօրութեան հետ նոքա վարուեցան ան-խոհեմ մանկանց նման: Վա՛յ մեզ. Վա՛յ մեզ: Հասած է նա... Ո՛հ, ինչպէս կը կոչուէր... ինձ այնպէս կը թուի թէ իւր անունը կը գոչէ ինձ և ես չեմ լսեր... այո՛, կը գոչէ... ունին կը դնեմ և չեմ ըմբռներ... Վերջապէս իմացայ... Հոռ-լան... Հոռլան նոյն ինքն... եկած է այն:

Բարէ, գիշակեր անգղն զաղաւնին կը ճաշակէ, գայլն զոչխարը, առիւծը զեղջիւրաւոր գոմէշը կը լափէ, մարդը նետով, սուրով, վառօդով զառիւծը կ'սպաննէ, բայց Հոռլան ճիշդ այնպէս պիտի վարուի մեզ հետ որպէս մենք վարուեցանք ցարդ ձիւն և եզան հետ. նա իւր ենթակայն պիտի ընէ զմեզ, իւր ծառայն և իւր սնունդը, և այս ալ իւր կամեցողութեան միակ զօրութեամբը: Վա՛յ մեզ:

Եւ սակայն անասունն երբեմն կ'ա-պտամբի և կ'սպաննէ զինքը սանձա-հարողն... ես ալ նոյնը կ'ուզեմ ընել... պիտի յաջողիմ. բայց նախ, պէտք է զայն ճանաչել, շօշափել և տեսնել:

19 Օգոստոս. — Աստուած գիտէ պի-տի սպաննեմ զայն: Տեսայ Հոռլան. ե-րէկ երեկոյ սեղանիս քով նստայ և ու-չադրութեամբ գրել ձեռագրուցի: Գի-տէի թէ շուրջս պիտի գար դեգերիլ, այնքան մօտէն որ թերեւս պիտի կա-րենայի զայն բռնել: Եւ յա՛յնժամ... յուսահատներու զօրութիւնը պիտի ըզ-գենուի, ձեռներս, կուրծքս, ճակատս, աւուայներս, ամէն ինչ պատրաստ պի-տի լինէր զայն խեղդելու, ընկճելու, խածնելու և պատառելու համար:

Եւ կը լրտեսէի զայն իմ գրգռեալ բոլոր գործարաններովս:

Վառած էի երկու ճրագներս և վա-ռարանիս ութ մոմերը, որպէս զի այս պայծառութեան մէջ կարենամ զայն տեսնել:

Դէմս անկողինս կար, կաղնեփայտէ սիւնաւոր հին անկողին մը: Ա՛յ կողմս վառարանն էր, ձախ կողմս ալ գուռը զոր ութգին գոցած էի, ընդ երկար զայն բաց թողելէ վերջ, որպէս զի ներս մտնէ: Ետիս կար դարանաւոր հսկայ հայելի մը որու առջև ամէն օր կ'աժի-լուէի, կը հագուէի, և որոյ մէջ սովոր-ութիւն ունէի յոտից ցլուլու ինքզինքս դիտել ամէն անգամ որ առջեւէն անց-նէի:

Արդ՝ կարդալ կը ձեռացունէի որպէս զի զայն խաբեմ, քանզի այն ալ զիս կը լրտեսէր, և յանկարծ զգացի, ապահո-վապէս զգացի թէ ուսիս վրայ նա կ'ըն-թեռնուր, թէ մօտս կեցած էր և ա-կանջիս իսկ կը դպէր:

Ոտքի ելայ բազուկներս արձակած, այնքան արագաբար ետիս դառնալով որ մազ մնաց պիտի իյնայի... Արդ, ցորեկուան պէս լոյս էր, սակայն ինք զինքս չկրցայ տեսնել հայելոյն մէջ: Հայելիս պայծառ էր և լուսաւոր, բայց պատկերս մէջը չկար... սակայն դէմը կեցած էի: Իւր բովանդակ մեծու-թեամբը կը տեսնէի այդ մեծ յոտակ տ-պակին բոլորովին խեղացնոր, կը դի-տէի զայն և չէի համարձակեր յառաջա-նալ, քաջ զգալով թէ իմ և հայելոյն մէջտեղ կեցած էր այն, թէ վերտօն խոյս պիտի տար ձեռքէս և թէ իւր աննշմարելի մարմինը ցլացմանս ար-գելը կը լինէր:

Ո՛րքան վախցայ: Յետոյ յանկարծ հայելոյն խորը մշուշի մը մէջ կրցայ ինքզինքս որոշել, ճիշդ այնպէս ինչպէս մարդ կը տեսնէ իւր պատկերը ջրոյ տա-րածութեան մը մէջ, և ինձ կը թուէր թէ այս ջուրը ձախէ յա՛յ կը հոսէր, յամբընթաց, վայրկեանէ վայրկեան պատկերս առաւել յոտակ ցոյց տա-լով: Խաւարման մը վերջացումն էր կար-ծես: Բայց ինչ որ կ'արգիլէր զիս պատ-կերս հայելոյն մէջ տեսնելէ, յայտնա-պէս որոշ չրջագիծ մը չունէր, այլ տե-սակ մը անթափանց թափանցակա՜նութիւն որ քիչ առ քիչ կը լուսաւորուէր:

Վերջապէս կրցայ ամբողջովին ինք զինքս որոշել, ինչպէս ամէն օր կ'որո-չեմ ամէն անգամ որ աչքերս հայելոյն մէջ ուղղեմ:

Այո՛, տեսած էի այդ էակը: Ոոս-կումը դեռ կը տիրէ վրաս:

20 Օգոստոս. — Ռուսնէն դարբին մը կանչեցի և սենեկիս համար երկաթ-եայ վանդակափեղկեր շինել պատուի-րեցի, ինչպէս ի Բարիզ մի քանի մաս-նաւոր տպարանաց գետնայարկերն ունին գողերու դէմ պատասպարուելու համար: Պատուիրեցի նաև նմանօրինակ դուռ մ'ալ. վատասիրտ մէկը կարծեց զիս, բայց ի՞նչ փոյթ...:

10 Սեպտեմբեր. — Ռուսն. Օթէլ քոնթինանթալ:

Լնցաւ... Լնցաւ... բայց արդեօք մեռա՞ւ: Սաստկապէս յուզուած եմ ը-րածիս համար:

Արդ, երէկ դարբինը երկաթեայ փեղկերը և դուռն իրենց տեղերն ան-ցուցած լինելով, թէ և ցուրտ էր, այ-սու հանդերձ մինչեւ կէս գիշեր բաց թողուցի զայնս:

Յանկարծ զգացի թէ հոն էր այն և

ուրախութիւն մը, խեղացնոր ուրախութիւն մը զիս պատեց: Մեզմիւ ոտքի ելայ և աջ ու ձախ ընդ երկար քայլեցի կասկածի տեղի չտալու համար: յետոյ կօշիկներս հանեցի և թոյլ մուճակներս հագայ: Երկաթեայ վանդակափեղկը գոցեցի և անձայն դրան մօտենալով, զայն ալ փակեցի բանալիի կրկնակի դարձուածքով: Այն ատեն վերստին պատուհանին կողմն յառաջանալով, ագուցիկով մը աւելի հաստատ կերպիւ փակեցի զայն և բանալին գրպանս դրի:

Յանկարծ զգացի թէ շուրջս կը դեգերէր, թէ ինքն ալ կը վախնար և կը հրամայէր ինձ որ իրեն ճամբայ տամ մեկնելու համար: Քիչ մնաց որ պիտի կատարէի իւր խնդիրքը: Թոյլ չտուի: դրան էրթնելով կէս մը բացի զայն, ճիշդ այնքան որքան հարկ էր ինձ՝ դուրս սողոսկելու համար, և որովհետեւ բարձրահասակ եմ, դուրս մինչեւ դրան վերին մասին կը դպէր: Վստահ էի թէ չէր կրցած խոյս տալ: այսպէս ուրեմն բոլորովին առանձին բանտարկեցի զայն: Եւ ինչ ուրախութիւն: ձեռքիս տակն էր այն, ազատելիք չունէր: վազելով վար իջայ, սենեկիս ներքեւ գտնուած սըրահին երկու կանթեղներն առի և ամբողջ իւրը գորգին վրայ թափեցի, ինչպէս նաև կարասեաց և ամենուրեք: յետոյ շոշկոցեցի և դուրս սրացայ, բնակարանիս մօտից դուռն բանալիով գոցելէ վերջ:

Եւ դացի պարտիզիս խորը, գափնիներու թաւուտի մը մէջ պահուելով: Ո՛րքան երկար տեւեց, ս՛րքան երկար: Բացարձակապէս մութ էր, խոր լուծութիւն մը կը տիրէր, ամէն ինչ անշարժ, ամենաթեթեւ հով մ'իսկ չկար, ո՛չ իսկ ատաղ մը: ամպերու հսկայ կոյտեր միայն որ թէև չէին տեսնուիր, ա՛յլ իւրեանց բովանդակ ծանրութեամբ հոգւոյս վրայ կը ծանրանային:

Աչերս տանս յառած կ'սպասէի: Ո՛րքան երկար տեւեց: կը կարծէի թէ արդէն կրակն ինքնին մարած էր և կամ թէ ինքը մարած էր զայն, երբ գետնայարկի պատուհաններէն մին պայթեցաւ: հրդեհին աղբեցութենէն և բոց մը, բոց մը ընդարձակածաւալ կարմիր և դեղնորակ, երկար, թոյլ և սլորուն, բարձրացաւ: սպիտակ պատն ի վեր և քերեց զայն մինչև տանիքը: Լոյս մը փայլեցաւ ծառերուն մէջ, ճիւղերուն մէջ, տերևոց մէջ և միանգամայն սարսուռ մը պատեց զիս, սարսուռ մը երկիւղի: Թոչունք սթափեցան քունէ, շուն մը սկսեց ուռնալ և ինձ թուեցաւ թէ արշալոյսը կը ծագէր: Նոյն հետայն, երկու ուրիշ պատուհաններ եւս պայթեցան և տեսայ թէ բնակարանիս ամբողջ ստորին մասը սոսկալի խորոյցի մը

էր դարձած: Բայց աղաղակ մը, ահռելի սուր կանացի աղիողորմ աղաղակ մը թնդաց զիջերուան լուծեան մէջ և երկու մանաւորներ բացուեցան: Սպասուորներս մոռացած էի: Տեսայ նոցա յուսահատ դէմքերը և նոցա բազուկներն որք կը տատանէին...

Այն ատեն սարսափէս ինչ ընել չը գիտնալով, սկսայ դէպ ի դէպ վազել «Կրակ կայ, օգնութիւն, օգնութիւն» գոչելով: Դիմաւորեցի այն անձերն որք կը հասնէին և ես ալ անոնց հետ դիտելու համար հրդեհին վայրը դարձայ:

Ա՛լ բնակարանս փայտակոյտ մը կը ձևացունէր, ահռելի և միանգամայն հոյակապ, խորոյցի մը այլանդակ որ ամբողջ դեպիքը կը լուսաւորէր, ուր երկու անձինք կ'այրէին և ուր նա եւս հոյ հարակ կը լինէր, այո՛, նոյն ինքը, իմ բանտարկեալս, Նորածին էակը, նոր աշխարհակալը, Հոռւան:

Յանկարծ ամբողջ տանիքը պատերուն մէջ գլորեցաւ և բոցեղէն հրաբուխ մը մինչև երկինք սուրացաւ: Խորոյցին վրայ բացուող բոլոր պատուհաններէն, կը տեսնէի այդ հրատապ հնոցն և կը խորհէի թէ հո՛ն, այդ փրուան մէջ մեռած լինելու էր այն...

Ո՛չ... ո՛չ... առանց երբէք տարակուսելու կենդանի է այն... մեռած չէ:

Այն ատեն... ո՛հ, այն ատեն... պէտք է ուրեմն որ ես ինքզինքս մեռցունեմ... Թարգ. Մ. Թ.

(Կի ար ՍՕՂԱՍԱՆ)

ՀԱՅԵՐԷՆ ՀԻՆ ԶԵՌԱԳԻՐԲ

ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԿԵՍԱՐԻՈՅ

1. ԱԻԵՏԱՐԱՆ.

Կազմ, հին արեւելեան, տախտակեայ կաշկպատ: Հանգամանք, մաքուր պահուած է: Նիւր, սպիտակ և ընտիր Մագաղաթեայ: Թւոյթք, 335 կամ 670 էջք: Սեծութիւն, 31.5×24 հարկերորդամէթր: Գիր, երկաթագիր, ընտիր գրչութիւն, սեւ մեկն: Գրութիւն, երկսինակ, 25×16 հրդմ: Սիւնակաց միջեր եղած դատարկ միջոցն է 3 հրդմ: Տալք, 19: Զարդագիրք են՝ ամէն գլխոց սկզբնագրերն գունաւոր ոսկեզօծ: ուղղակի երեք տալք ոսկեգիր: Եզերագարպք, թուով 191, ութ հատ եւս մկրատած են: Եզերագարպք, որք տեղ տեղ ալ սիւնակաց միջեւ են, թուով 162, երկու հատ եւս մկրատած են: Խորանք, հանդերձ մեծ եզերագարպքով, թուով 3: (մին կը պակսի), թղ. 1ա, 162ա, 260ա: Դատարկ, թղ. 1, 161ա ա թղ. 259բ երկրորդ սիւնակը: Յիշատակագրութիւն,

Մատենիս վերջէն թուղթ մը մկրատուած լինելուն գլխաւոր յիշատակարանը կը պակսի, բայց մասնաւորապէս, թղ. 26բ, և թղ. 303ա: Տէր, Պարոն Վասակ: Ժամանակ, Գրիչ, Տեղի, անծանօթ: Տեղեկութիւնք, ա) Մատենիս բուն իսկ 335 Մագաղաթեայ թղթերէն ի դատ, սկիզբն 2՝ և նոյնպէս վերջն 2, երկաթագիր գրով գրուած, այլ Մագաղաթեայ թղթեր կան մէյ մէկ հասարակ թղթերով: բ) Չորս Աւետարանչաց պատկերներն, և թղ. 161ի կիսէն աւելին մկրատած են:

Մատենան ճարտար ձեռաց գրչւթիւն մ'է նկարչի հրաշալի արուեստիւ, գտնուած Զարդագիրք, Գլխագիրք, Եզերագարպք, պատկերք, խորանք, ևայլն, ամէնն ալ սքանչելի են և դունաւոր ոսկեզօծ: Պատկերաց և Եզերագարպքոց մի քանիսն, թերեւս խոնաւութենէ, եղծուած են թէև, բայց միւսք իրաւամբ ճարտարաց ուշադրութիւնը կը գրաւէ, և նոցա վրայ կը փայլի արուեստ և վրձինի փափկութիւն:

Մատենան է Աւետարան:

1. Թղ. 1ա—98բ, Աւետարան Մատթէոսի:— «Գիրք ծնրնդեան Յի Գի որդւոյ Դաւիթ որդւոյ Աբրահամ»:— Զարդագիր:

2. Թղ. 99ա—161բ. Աւետարան Մարկոսի:— (Մարկոսի Աւետարանին առաջին բուն թերթին մկրատուած, և՛ ուրիշ Աւետարանի մը Մագաղաթեայ առաջին թերթին հանուելով, սորա տեղ գրուած է):

3. Թղ. 162ա—259բ. Աւետարան Դուկասոս:— «Գանգի բազումք յաւժարեցան վերքստից կարգել»:— Զարդագիր:

4. Թղ. 260ա—335բ. Աւետարան Յովհաննոս:— «Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Ած, եւ Ած էր բանն. նա էր ի սկզբանէ առ Ած.»— Զարդագիր:

Յիշատակագրութիւնք.

1. Թղ. 26բ. (Եզերագարպքն է բոլորակ մը համակ ոսկի, սորա միջեւը գրուած է): «Պարոն Վասկայ Ար Տր:» Բոլորագիր:

2. Թղ. 303ա, (Մեծագիր պատկերի վրայ սպիտականերկով գրուած է):— «Տէր Յս ողորմեա Վասակա ծառաիք ստացողի Սրբոյ Աւետարանիս քո:»— Բոլորագիր:

2. ԱԻԵՏԱՐԱՆ

Կազմ, հին արեւելեան, տախտակեայ կաշկպատ, արտաքին մէկ երեսն

արծաթապատուած, միւս երեսին վրայ միայն խաչ մը կայ արծաթեայ: Ներքին երեսներն գունաւոր թուղթք փակցուած է: Նիւր, փարակ և փայլուն Մագաղաթեայ: Թուղթք, 286 կամ 572 էջք: Մեծութիւն, 13×9 հարիւրորդամէթր: Գիր, մանր բոլորագիր, ընտիր գրչութիւն: Գրութիւն, երկսիւնակ, 8.5×5.5 հրդմ. հոգ, 23: Հանգամանք, մաքուր պահուած է: Դատարկ, թղք, 1ա, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10ա, և 285ա—286բ: Գլխաղբիք, կապոյտ և կարմիր: Զարդաղբիք և Թաշնաղբիք են ամէն գլխոց սկզբնաղբերն: Եզերագարդ, թուղթ 204. կարմըրաւ բայց ոչ ճաշակաւոր: Խորանք, Եւսերի՝ թուղթ 2. թղ. 1բ, 2ա: Համաձայնութեանց՝ թուղթ 8. թղ. 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա: Աւետարանաց՝ թուղթ 4. թղ. 14ա, 97ա, 150ա, 230ա: Յիշատակագրութիւն, չուներ: Ժամանակ, Գրիչ, Տեղ, Տէր, անծանօթ: Տեղեկութիւնք. Մատենիս սկիզբն երկու այլ Մագաղաթեայ թղթեր կան երկաթաղբի գրուած:

Մատենիս մէջ գտնուած Եւսերի, Համաձայնութեան խորանք և ամբողջ Եզերագարդք կարմրաւ են, բայց ոչ արուեստիւ շինուած: Իսկ Աւետարանաց խորանք հանդերձ մեծագիր Եզերագարդքով, և Թռչնագիրք ու Զարդագիրք՝ գունաւոր ոսկեզօծ են և ընտիր գործ ու արուեստիւ:

Մատենա Է Աւետարան.

1. Թղ. 11ա—13բ. Նախագրութիւն և Յուցակք Գլխոց Աւետարանին Մատթէոսի:

2. Թղ. 14ա—95ա, Մատթէոսի Աւետարան.— «Գիրք ծ.» թռչնագիր, ուղղակի երկու տողն Գլխագիր և երկուքն բոլորագիր, կարմրաւ:

3. Թղ. 95բ—96բ. Նախագրութիւն և Յուցակք Գլխոց Աւետարանին Մարկոսի:

4. Թղ. 97ա—147ա. Մարկոսի Աւետարան.— «Սկիզբն» թռչնագիր, ուղղակի չորս տողերն ըստ վերնոյն:

5. Թղ. 147բ.—149բ. Նախագրութիւն և Յուցակք Գլխոց Աւետարանին Լուկայ:

6. Թղ. 150ա—227բ. Լուկասու Աւետարան.— «Քանգի» թռչնագիր, ուղղակի չորս տողերն ըստ վերնոյն:

7. Թղ. 228ա—229բ. Նախագրութիւն և Յուցակք Գլխոց Աւետարանին Յովհաննու:

8. Թղ. 230ա—284բ. Աւետարան Յովհաննու.— «Եւսկաւ» զարդագիր, ուղղակի չորս տողերն նոյնպէս ըստ վերնոյն:

(Շարունակելի)

ՏՐԴԱՏ ՎԱՐԴ. ՊԱԼԵԱՆ



Ս Ի Մ Է Օ Ն Ք Ա Հ Ա Ն Ա Յ

ԿԵՐԵՐԴ ԱՏԱՆԱՌՐԱՅ

Ի Բաբերդ՝ Քարավրակ գիւղի Մայր եկեղեցւոյ գաւթին մի խորշը, մի հսկայ մահարձան՝ ուխտաւորաց արտասուքը կը հրաւիրէ իւր անարուեստ տողերուն վերայ. այդ սգաստուեր ցուրտ շիրիմ՝ լսեր եմ շատ անգամ, ի յուշ հին աւուրց, խուլ ու մուշ ձնացած է կնոջ մը և որբացեալ օրիորդաց սրտածմիկ ողբոցը հանդէպ, աւանդապաշ ուղղութեամբ յինքն ամիտիւնով «նորաբողբոջ»(1) կղերականի մը Ս. անիւնը. Սիմէօն քահանայի դամբարանն է այն. Քարավրակի 25 ամեայ երախտաւոր «Տէր վարժապետին»(2), որ ծնեալ ի Կիւմիւշխանէ 1805ին, ուսեալ ի Բաբերդ յոտս համբաւաւոր Զուպուքճեան Յարութիւն վարժապետի Կարնեցոյ(3), 1820—30:

Գրեթէ 25ամեայ սարման էր Սիմէօն, երբ 1831ին Քարավրակի երեւելիք ու շիւմ պատանին գիւղ բերին քաղաքէն, յարգեցին պատուեցին բարոյապէս և նիւթապէս իսկ, ամուսնացուցին երեւելի Վեանեայի մը դստեր, իսկ Սիմէօն երախտաւորեալ գիւղէն և երախտաւորելով գիւղին, դպրութեան յառաջագէմ ջանիւքը, ամբարձաւ յատուկ ջանքերով քահանայութեան Քարավրակի Զարխափան Ս. Աստուածածին եկեղեցւոյն համար, ձեռնադրութեամբ Յովհաննէս Եղիսկոպոսի ուրումն, հրամանաւ Տէր Յակոբ Պատրիարքին Կ. Պոլսոյ, 1852 փետրուար 3:

Սատակօն էր, և իւր երկիւղած վարքը՝ մաշած էր արդէն նիհար կազմութիւնը. ձեռնադրող Սրբազանն ըսած է. «Արդէն մեռել է էս մարդ». և արդարեւ 3 ամ միայն, և ահա անողորմ մահն վրայ հասաւ. Տէր Սիմէօն թողուց աղցաւոր անցաւոր աշխարհն, և գնաց ժառանգել իւր փառաքելին 1855 յունվար 23:

Իւր ժամանակին ընտիր գրագէտը, բանագէտը և երգողն էր. երկրին երեւելեաց սիրելի, իւր քաղցր ձայնով և գեղեցիկ գրարար չարադրութեամբը, զոր ի պէտս ազգային գրուածոց կը գործածէր առաջնորդաց հրամանաւ. իւր տգէտ որդիքը ամբողջ կորուսած են երկերն՝ Քերականութիւն, այլ և այլ չարագրութեանց օրինակք, և սրբոց ու երեւելի անձնաւորութեանց նկատմամբ ոտանաւոր գովեստներ. ինչպէս որ է թղթերու ծրար մը փոշոտ անկեան մը ծակերէն ձեռք ձգեցինք, և հին գանձ մը գտնելու չափ խրախացեալ, մեր քով կը պահէմք զայն, և արժան կը համարիմք հետզհետէ ի լոյս ածել անգութ ծախիչներու ձեռքէն պրծած մի քանի երգերն:

Ահաւասիկ ատենցմէ մին.

« Բան գովագրական, ասացեալ ի վերայ Բաբերդոյ առաջնորդ Տեառն Կա—
« րապետ շնորհապանձ վարդապետի Կեսարացոյ ի Սիմէօն չնչին դպրէ Մատ—
« թէոսեան Եւիլատայ»(4):

« Երջանկազարդ դէտ՝ Հովուապետ բարի.
« Արժանընտիր Տէր՝ Կարապետ Բաբունի.
« Առաջնորդ կարգեալ յայս մերս երկրի
« Բաբերդ յորջորջեալ խաղտեաց քաղաքի:

« Զ՝ ի վերուստ ընտրեալդ արժան դատեցան,
« Յատուկ ազգասէրք որք ի Պոլիս կան.
« Գերաթողով Տեարք վսեմարգական
« Ընդ Սրբազան Հօր գերեթանկութեան»(5)

« Յղեցին զՁեզ ի պատիւ ազգիս,
« Եւ յոյժ ի յատկից դու պատուասիրիս.
« Առ ի շահել զաղգս յար միշտ ի բարիս,
« Զորս մարգելով ի յառաքելիս:

« Եւ ի տրամադիր կանոնս Հարց վեհից,
« Զորս եղին հաստատ ի յաւիտենից,
« Ապաքէն ի նոյն փութայք կարգ բանից
« Ներածել զմեզ յօգտիլ ի բարիս:

- (1) Եռամեայ քահանայութեան մէջ վախճանելուն համար այդպէս գրած են:
(2) Յետ քահանայութեանն այդպէս կոչուած է, գեղեցիկ վերտառութիւն:
(3) Ոտանաւորներ, տողեր ունի. իւր կեանքն առիթ պիտի ունենամք գրել:
(4) Նոր հեղինակ մը Կիւմիւշխանէն Եւիլադ կը կոչէ, չգիտեմք ո՛րքից առնելով:
(5) Այն ատեն մեծ վստահութիւն Պատրիարքարանի նկատմամբ:

« Իսկ քոյդ հանձարեղ առաջնորդական ,
« Եւ ներկուռ վարուքդ վարդապետութեան .
« Ստացեալ յանձին ձերում սրբութեան
« Այդ բարի պաշտօն , որ ձեզ է պատկան :

« Որպէս ջահ անշէջ՝ դու լուսով փայլիս ,
« Լուսատու ճրագ փոքր նահանգիս .
« Զարգացո՛ղ զմեզ ի պէսպէս բարիս ,
« Կարգադրելով զեւս մեր յերկինս(1) :—

« երկու տող եղծեալ . և
« } չորս տուն կորսուած :
« Վասն որոյ խնդրեմ , ո՛վ Հայր Սրբազան ,
« Ներել սխալանաց խնայ դուրսէս :

« Երկոտասան տամբ՝ որք իսկ յանգեցան
« Արժան լինել Տեառնդ ի նոյն աստիճան
« Վսեմապատիւ գերիշխանութեան ,
« Վարել Սրբութեանդ յար միշտ յաւիտեան :

Ի Պ Ի Բ

(1) Զգիտեմք ի՞նչու այժմեան վարժարանք « Ելքն յերկին » չեն աւանդեր :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թէպէտ կ'ըսուի թէ Ռուսիա աւելորո-գերմանական սահմանագլխոյ վրայ մեծ գործութիւններ կը հաւաքէ և թէ այդ մասին Ռուսիոյ գինուորական շըրջանակաց մէջ մեծ շարժումներ տեղի կ'ունենան , սակայն ստույգ աղբիւրէ առնուած լուրեր կը վստահացնեն թէ այդ շարժումներն ու համախմբումները կարեւորութիւն չունին :

— Առեւտրական հրապարակին վրայ շարժումն կարեւորագոյն խնդիրն է Ժ . Է . Կիւնցպուրկ սեղանաւորական , առեւտրական և ճարտարագործական տան սնանկութիւն հրատարակելն : Այս տուն որոյ գլխաւոր կեդրոններն էին ի Բեզ-ընսպուրկ և ի Բարիզ , սնանկանալով մասնաւորաբար Լոնտոնի և Բարիզու հրապարակներուն կը փնտսէ , թէպէտ բաժնեթղթոյ վրայ մեծ ազդեցութիւն չէ ըրած այս գէպը : Հաշուեյարդարութիւնը դիւրութեամբ պիտի կրնայ կատարուիլ , քանի որ իւր վեց միլիոն ըսելի պարտքին հաւասար պահանջներ ու գոյք ունի : Վերջին լուրերէն կ'իմանամք թէ պարտքը 15-20 միլիոն է եղեր :

— Լոնսոնի Մուրիէզդա գրամատուեն ալ իւր վճարումները դադարեցուցեր է , սակայն կանխապէս գուշակուած լինելով՝ այնչափ մեծ փնտսներ չէ պատճառած :

— Պարսկաստանի կառավարութիւնը 600 հազար անգլ . սկի պիտի վճարէ այն տեղի ծխախոտի Բէթիւ անգլ . ընկերութեան , որ լուծուած է և անոր գոյքերն ինք պիտի առնու :

— Դերմանիոյ կրթական նախարար՝ Պ . Զետլից հրաժարած է կրթութեան նոր ծրագրին առթիւ : Այս մասին Կայսեր և Բարբիլի զօրավարին միջև խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան : Զետլից կ'ոմսին հրաժարականը դեռ չէ ընդունուած Կայսրէն :

— Բարիզու Պանք Ժեներալ ալ Շըմէնտըֆէր է ալ լինտիւսդրի դրամատունը 20 միլիոն ֆրանք պարտքով սընանկացաւ : Վարչական խորհրդոյ անդամներէ մին անձնասպան եղաւ , մին ձերբակալեցաւ և երկուքն ալ փախան : Այս սնանկութիւնն ընդհանրապէս միջին դասու մարդոց կը փնտսէ :

— Շուէս և Նորվեգիա , որք թէ և մէկ թագաւոր ունենալով հանդերձ ինքուրոյն կը կառավարուին , այժմ վճի մէջ են : Նորվեգիա կը գանգատի թէ իւր արտաքին շահեր կը փնտսուին , շատ տեղեր դեսպանք ու հիւպատոսք Շուէտացի լինելով , Այս առթիւ բողոքագիր մը պիտի մատուցուի Սթորթին-կին :

— Ամերիկացիք կը շարունակեն նըպաստներ հասցնել Ռուսիոյ սովետոց : Ինքիանա չոգենաւը Ֆիլադելֆիայէն Ռուսիա հասաւ 100.000 փուտ ալիւրով , Միսուրի չոգենաւն ալ նոյնպէս ալիւր բեռցած քիչ ատենէն կը հասնի : Ֆիլադելֆիայէն հարցուցած են Միացեալ-Նահանգաց կառավարութեան թէ դեռ եւս նպատակ դրկել պէ՞տք է ի Ռուսիա :

— Մէքսիկոյ Լաթս անուն մարդ մը գիշերանց Քորսոֆանէն փախչելով , ուր բանտարկուած էր , երեքուկէս ամիսէն Գահիրէ հասեր է , և կ'ըսէ թէ վերջին

երկու տարւոց մէջ միշտ սով կը տիրէ եղեր Սուտանի բոլոր կողմերը և բնակչաց կէսէն աւելին արդէն զոհ գացեր են : Ժողովուրդը իրենց այժմեան պետէն դժգոհ լինելով , պատրաստ են եղեր իտիվին պաշտպանութեան ներքեւ մըտնելու :

— Յայտարարութիւն մը մատուցուած է Սերպիոյ Սըրբաբնային որով նախկին թագաւորը՝ Միլան կը դադարի արքայական տան անդամը լինելէ և առ այդ ունեցած իւր բոլոր իրաւունքները կը կորսնցնէ : Երիտասարդ թագաւորին կրթութեան հոգը բոլորովին ինամակաւութեան կը արուի : Միլան թագաւորը ամենեւին իրաւունք չ'ունի Սերպիայէն և անոր արքայական տունէն բան մը խնդրելու , կը դադարի Սերպալաքացի լինելէ և ամենեւին չ'կրնար Սերպիա մտնել , ի լաց առեալ միայն Աղեքսանդր թագաւորին ծանրագին հիւանդութեան պարագայն :

— Պեմիսլայի Անտերլուէսի հանքին մէջ անցեալ շարժում տեղի ունեցած կրկուրի սլայթումին 140 հոգի զոհ գացած են : Այս առթիւ 1500 գործաւորք պարապ մնացած են : Հրդեհը կը շարունակէ դեռ հորերուն մէջ , հակառակ անոնց մէջ լեցուած ջուրը :

— Պեմիսլայի ծովուն մէջ փոկ որսալու առթիւ Միացեալ-Նահանգաց և Անգլիոյ միջև բացուած վէճը սաստկացաւ : Իրաւարարութեան դիմելու որոշում չ'կայ դեռ : Առ այժմ Ամերիկացիք ծովեզրէն մինչեւ 1—2 ժամ հեռու փոկ որսացող նաւերը գրաւել հրամայած են :

— Ասիայի բոլոր պղինձն ինք միայն շահագործելու նպատակաւ ամերիկեան մեծ ընկերութիւն մը կազմուած է ի Նիւ-Եորք :

— Պարսկաստանի Մեշհետ քաղաքին մէջ հնտախո ծագեր է :

— Պուլկարիոյ հանգուցեալ գործակատար՝ Պ . Վուլքովիչի սպանութեան գործին առնչութիւն ունեցող թուղթեր կրող երեք պուլկարներ Օսեսայի մէջ ձերբակալուեր են :

— Յունաստանի գրամական վիճակը միշտ անձուկ է . կառավարութիւնը որոշած է խնայողութեան համար օտար երկրաց մէջ ունեցած բոլոր դեսպանները կանչել և գործակատարաց ձեռամբ վարել անոնց գործերը :

— Պապը Հռովմի Զիլիլիա Մետել-լայի գերեզմանը ներկայացնող մոզայիք մը զրկած է Պարսից Շահին , նամակաւ մը որով շնորհակալութիւն կը յայտնէ քրիստոնէից պաշտպանութիւն շնորհուն համար : Շահը՝ գոհ մնալով յայտներ է թէ միշտ պիտի շարունակէ այդ ընթացքը , նա մանաւանդ կաթոլիկ կղերի մասին :

— Փորքուքակալի մէջ քանի մը պան-
քաներ սնանկացեր են :

— Զուիցեթոյ մէջ 24 տարիէ ի վեր
առաջին անգամը լինելով գլխատուրթիւն
մը տեղի ունեցեր է : Գլխատուրթն է
Ֆէրտինան Կարթի տէ Մօնցա անուամբ
գործաւոր մը որ երկու զաւակաց տէր
էր և Լիւցէրնի մօտ ուսուցչուհի մը ըս-
պանած էր :

— Ռումանիոյ թագաւորը Զարեիչին
նախագահութեամբ կազմուած սովբոց
յանձնաժողովին 10,000 Ֆրանք նպաստ
ըրկեր է :

— Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխա-
նին պատկերով 5 Ֆրանքնոց դրամներ
պիտի կոխուին ի մօտոյ :

— Պուլկարիոյ մէջ ծխախոտի 105
գործարաններ կան եղեր 1652 գործա-
ւորով : Ծխախոտի սպառման ընդհա-
նուր գումարն 5,532,759 Ֆրանք :

— Ռումանիոյ արտաքին գործոց
նախարար Շիմէյ իշխանը մեռեր է :

— Վերջին պահուց կը լսեմք թէ
զօրավար Գաբրիլի Ռուսիոյ նախա-
րարապետութենէն հրաժարուած է ,
բայց կը մնայ կայսրութեան նախարար-
ապետ և Ռուսիոյ Արտաքին գործոց
նախարար : Իրեն յաջորդեր է Էվլէն-
պուրկի Պօթօ կոմսը : Կոմս Աէթլիցի
յաջորդած է Տօքթ. Պօսէ :

ՆԱԽՆԱԿԱՆ ՇՈՊԵՆԱԻՔ

Ֆինլանտիոյ Հելսինկիֆօրս քաղաքին
մէջ գործաւորք ահագին անտուկ մը
գտեր են որուն մէջ Հին երկաթի կը-
տորուանք և ձեռագիր մը կար : ձեռա-
գիրը Սիւկէրի կողմէ գրուած չոգւոյ
զօրութեան և նորա գործածութեանց
վրայ ընդարձակ բնագիտութիւն ունէ՛,
իսկ երկաթի կտորուանքը կը կազմեն
եղեր կատարեալ չոգեգործի մը : Դեռ
յայտնի եղած չէ թէ ինչպէս Սիւկէրի
մէջ գործը Ֆինլանտիոյ խորերը թաղ-
ուած կը գտնուի , որովհետեւ Սիւկէր
(1082—1152) ժ. գարուն ապրած է :
Իւր ժամանակին բոլոր գիտութիւններն
ուսանելով , Մէն-Տընի արքայարանին
անդամ և վերջ ի վերջոյ դարուն ամե-
նամեծ դիւանագէտն եղաւ և Լուի Է. ի
խաչակրութեան գացած միջոցին ամ-
բողջ Ֆրանսան ինք կառավարեց :

Այսու յայտնի կը լինի թէ Բաքէն և
Ֆիւլթըն հնարիչներէն շատ առաջ ծա-
նօթ էր չոգւոյ զօրութիւնը :

Եգիպտացիք իրենց մանկանց համար
չոգեշարժ խաղալիքներ ունէին , թըրծ-
եալ հողով շինուած :

Չ. դարուն Անթէմ տը Թրալ , Այա
Սօֆիայի ճարտարապետը , կռապաշտ
դրացի մը ունէր շատ աղմկայոյզ : Ճար-

տարապետն այդ ձանձրացուցիչ դրա-
ցիէն ազատելու համար , իւր տան մէջ
կաթսայ մը շինել տուաւ որուն մէջէն
խողովակներ ելնելով քովի տան գերան-
ներուն կը յանգէին : Օր մը՝ երբ կռա-
պաշտը մասնաւոր հրաւիրելոց խնճոյք
մը կուտար՝ իւր սովորական աղմուկնե-
րով թաղը լեցնելով , ճարտարապետը
կաթսային տակ մեծ կրակ մը վառեց
և ահա դրացւոյն տանիքը բարձրացաւ
ու գուրս նետուեցաւ և խնճոյք սը-
րահն ալ չոգւոյ ամպով մը լեցաւ : Հը-
րաւիրեալք սարսափով փախան զիրենք
հրաւիրողին հետ : 1660ին տպուած
գրքի մը մէջ գրուած է այս :

Ժե. դարուն վերջերը , Վերածնու-
թեան ամենէն մեծ հանճարներէն մին՝
Լէօնար տը Վինչի՝ չոգեշարժ թնդան-
թի ծրագիր մը գրած է :

1542ին Պարջելոն քաղաքացի երկ-
րաչափ մը՝ Պլաքօ տը Կարէյ , Կարո-
լոս Ե. ի առաջարկեց իւր իսկ ներկա-
յութեան նաւերը յառաջացնող չոգե-
շարժ գործի մը շինել : Նախ և առաջ
կարեւորութիւն չտուին , սակայն վեր-
ջապէս տեղի տուին իւր խնդրանաց :
Այն ատեն Պլաքօ տը Կարէյ Թրինիստ
անուամբ 200 տակառաչափ տարողու-
թեամբ նաւ մը շինել տուեր և իւր
գիւտը փորձեր է 1543 յունիս 17ին :
Որոշեալ նշանը տրուած ժամանակ ,
նաւը սկսեր է քալել առանց թիւրու
և առաքաստներու : Ժողովուրդը կը
ծափահարէ և Կայսեր հրամանաւ գու-
մարուած յանձնաժողովը՝ չիրաղով ժո-
ղովուրդին ընդհանուր փափագին հա-
կառակ կարծիք մը յայտնել , նպաստա-
ւոր տեղեկագիր մը կը յանձնէ կայսեր :
Բայց այդ յանձնաժողովին նախագահը ,
որ կառավարութեան գանձապահն էր ,
ինքնին անջատ տեղեկագիր մը մատու-
ցանելով թէպէտ կը գովէ Կարէյի հան-
ճարը , սակայն իւր գիւտը անօգուտ կը
ներկայացնէ , կնճռոտ ու վտանգաւոր
կոչելով զայն : Այս ալ 1830ին հրատա-
րակուած գրքի մը մէջ գրուած է : Կա-
րոլոս Ե. թէպէտ արգիլեց այդ գիւտին
գործադրութիւնը , սակայն դարձեալ
անտես չըրաւ հնարչին հանճարը և ա-
նոր ծախքերը վճարելէ զատ , 17 հա-
զար Ֆրանքի ալ պարգև մը տուաւ :

Ամերիկացիք թո՛ղ պարծենան թէ
իրենք են չոգենաւը հնարողը :

ԱՂԵՔ. ԳԱԼԱՔՃԵԱՆ

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՆՆԱՆ. — Նոր բա-
ռագիրք հայերէն լեզուի . — Հրատարա-
կուեցաւ 40—41 երորդ թերթին : Բաժ-
նեզինն 15 դահեկան : Բաժանորդագը-
րութեան համար դիմել առ հեղինակն ,
ի Կ. Պոլիս , Էսկի-Ջապթիէ , Պէրպէր-
եան տպարան :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաբաշխութիւնք . — Մէմուհ
փաշա Տէպրէ գաւառին (Մանասթըր) և
Ահմէտ պէյ Հօրան գաւառին (Սուրիա)
կառավարիչ անուանեցան : — Ապսուլ-
լահ էֆ . Մուսուլի Շէհրիփաղար գա-
ւառակին , Ապտիւլբատէր պէյ Ջիպար
գաւառակին , Ալի Նիհատ էֆ . Տրապի-
զոնի Վաքիլբէպիր գաւառակին , Հա-
սան Ջիւհտի էֆ . Մապկերտ գաւառա-
կին (Պարբերգ) գայմագամ անուանե-
ցան : — Մուհարրէմ էֆ . Այսրն նա-
հանգին , Էօմէր Ալի էֆ . Հալպ նա-
հանգին և Նազըմ պէյ Գասթամուհի
նահանգին մէքթուպճի անուանեցան :

Ասիւնաք . — Բապիայի աստիճան
տրուեցաւ Սեբաստիոյ Քէօրիւ գաւառ-
ակին գայմագամ էմին պէյի :

Պատգամաբաշխ . — Ա. կարգի Օսմա-
նիյէ՝ Հանր . Պարտուց վարչութեան
ժողովոյ նախորդ նախագահ Պ. Օպա-
րէի : — Ա. կարգի Մէճիտիյէ՝ Ատանա-
յի կուսակալ Հաճի Իզգէթ փաշայի ,
Միջերկրականի ռուս . նաւատորմին հը-
րամանատար՝ Ժովակալ Լիվրօնի և Գաս-
թամուհիի կուսակալ Ֆայիգ փաշայի : —
Գ. կարգի Մէճիտիյէ՝ Ագրիանուպուլ-
տոյ երևելիներէն Թէվֆիգ պէյի : — Դ.
կարգի Օսմանիյէ՝ Կեսարացի վաճառա-
կան Հաճի Ահմէտ էֆ . ի . — Ե. կարգի
Մէճիտիյէ՝ Նիկոմիդիոյ կայս . գործա-
րանին պետերէն Համբարձում աղայի :

— Միջնորդ եւ յանձնակատար այ-
սուհետեւ վաճառականաց նման իրենց
քէզէրէն Առևտր . նախարարութենէն
պիտի առնուն և արհեստագետք իրա-
ւասութիւն չպիտի ունենան վաւերացը-
նելու անոնց , ինչպէս նաեւ վաճառա-
կանաց դրամական կարողութիւնը , Ա.
ռևտր . Սենեկին յատուկ լինելով այդ-
իրաւունք , Նօտաքք ևս իրենց ներկա-
յացուած երաշխաւորութեան գրերուն
ամբողջութիւնը միայն պիտի վաւերացը-
նեն և դրամական կարողութեան խնդ-
րոյն չպիտի միջամտեն :

— Պոլսոյ Բարախանց ընկերութեան
գնած Սիւհատար Աղա լեռնէն հանուե-
լիք քարերը Գարաաղաճի հանդէպ գլու-
նուած կղզեկաց մէջ պիտի պատրաս-
տուին : Ընկերութիւնը գնած է նաեւ
Եալը քէօշկին գտնուող Վիշնէլիք Բա-
լքիսանէն որ նորոգուելով մեքենայից
պիտի յատկանայ : Յառաջիկայ շարժու-
չինութիւնք կ'սկսին :

— Թլքասաւական վարչութեան շի-
նել տուած թղթատար վակոնները որք.
Եւրոպիոյ հետ թղթատարական ուղ-
ղակի յարաբերութեանց պիտի յատկա-
նային , բանիլ սկսան և մեծ դիւրու-
թիւններ կ'ընծայեն :

— Պէյֆօգի խաղախորդարանն ընդարձակուելով, կաշիներու պատրաստութիւնը ելեկտրականութեամբ պիտի լինի:

— Համիսիլէ հեծալագնդոց մէջ ընդունուելու համար մեծ պատրաստականութիւն ցոյց կուտան ճէզիրէի և Մուսուլի շրջակայքը մինչև Հալէպ բնակող աշիրէթք:

— Մայրաքաղաքէս գաւառները երթալու համար Մուսթարայ կողմէ քրիստոնէից տրուած իւմուխապէրներուն վրայ դրոշմաթուղթ պիտի փակցուին:

— Սաքարիա գետը յորգելով, Կէյ-վէի շրջակայքը ողողեր և Ատարազարի թումբերն ալ խորտակելով քաղաքն ալ մեծ մասամբ ողողեր է: Կառավարութիւնը հարկ եղած միջոցները ձեռք առած է արկածելոց օգնելու և կանխագգուշութիւնները ձեռք առնելու համար:

— Գոնիայի նահանգին ոչխարաց տուրքն այս տարի 156468 զրշ. աւելի եղեր և տասանորդի տուրքը՝ 652644 զրշ. աւելի գինով վարձու տրուեր է: Նահանգին մէջ այս տարի ընդամենը 1262 տուն գաղթական հաստատուեր են, և քսանէ աւելի նախնական վարժարաններ պիտի կառուցուին:

— Նէվսէնի մէջ (Գոնեա) հողին պատուելովը փաստուող անձանց Վեհ Սուլթանը 10000 զրշ. չնորհած է:

— Կարնոյ անգլ. հիւսիստոսարանի թարգմանին տունը գողեր մտնելով, բաւական արժէքաւոր նիւթեր գողցեր են. գողերէն երկուքը ձերբակալուած են:

— Ասանայի վերաքննիչ ատենի ընդհ. դատախազի դիւանին քարտուղար՝ Աբրահամ էֆ. հրաժարեցուցուելով իրեն յաջորդեր է քարտուղարներէն՝ Սոյրի պէյ. Ընդհ. դատախազի օգնականութեան քարտուղար՝ Միհրան էֆ. հրաժարեցուցուեր է:

— Օսմ. ծխախոտի Բէթիին և Թէն-պէթիի ընկերութեան միջև կնքեալ պայմանագիրը վաւերացաւ: Բէթիին գաւառաց գործակալը այդ ընկերութեան գործերն ալ պիտի տեսնեն, որուն համար Բէթիին կարեւոր գումար մը պիտի ստանան: Թէնպէթիի ընկերութիւնը բոլորովին պատրաստ պիտի լինի ապրիլ 4ին (ն. Տ.) գործի սկսելու. իւր պաշտօնատունը կը գտնուին Օսմ. Պանքոյի նորակառուց չէնքին մէջ:

— Ասալիայէն սկսեալ մինչև Եսֆա ծովագերէն եկող նուէրուն համար բըժըշկական քննութիւնը վերցուած է:

— Կաթոլիկ Ասորուոց՝ Պատրիարք Տ. Ճերճիս Շէլիաթ մեռեր է ի Հալէպ: Տեղապահ կարգուեր է Մուսուլի առաջնորդը Տ. Պէհնամ Պէնի:

— Հոռոսի կառավարական դրամարկը կողոպտուեր է փետր. 26ի գիշերը:

— Խարբերդի մէջ էնֆլուէնցան կը շարունակէ առանց վտանգաւոր հետեւանաց:

— Գոնեայի քրոմի հանքերը, որք խնդրոյ ներքև են, նուազուրդի պիտի դնուին:

— Հանի Սարգիս Բամուքճեան և Մամաս Հէքիմեան հեղուկ մը գտած են որով հաւկիթները լուացուելով վեց ամիս պիտի կրնան պահուիլ: Հարկ եղած արտօնութիւնը շնորհուած է իրենց:

— Զմիւռնիայէն զրկուած օտար ապրանք մասին Սամսոնի մաքսատունէն յարուցուած դժուարութեանց համար, Զմիւռնիացի վաճառականք աղերսագիր տալով Բ. Դրան, հարկ եղած հրամանները ստացած են:

— Այն դեղագործ որք կայ. բժըշկական վարժարանէն վկայագիր կամ նոյն վարժարանէն վաւերացեալ օտար վկայականներ չունին, իրենց արհեստն ի գործ դնելէ պիտի արգիւտին:

— Կայս. կառավարութեան մէջ գլուխուղ մաքրանոցները բարենորոգելու և ի հարկին նորեր ալ հաստատելու համար յանձնաժողով մը և շինութեան մասնախումբ մը կազմուած է: Մասնախումբին նախագահ և առողջապահական ժողովոյ դեր-նախագահ Արիֆ պէյ, ինչպէս նաև յանձնաժողովոյ անդամներէն հազարապետ Արիֆ պէյ չորեքշաբթի օր քննական պտոյտ մը ընելու գացին յԱղէքսանդրիա և ի Կարմիր Ծով, ընկերակցութեամբ Տոքթ. Տուքայի:

— Դարամուսայի նախնական դատարանի նախագահը զեղծմանց պատճառաւ պաշտօնանկ եղած է: Նիկոմիդիոյ ընդհ. դատախազը փոխանորդաբար պիտի վարէ նորա պաշտօնը:

— Սօսիէի Ժենեալ Օրթոման դըրամատան վարչական խորհրդոյ յառաջիկայ մայիս 30ի նստին մէջ դրամատունը լուծելու խորհուրդ կայ, քանի որ ըստ պայմանագրութեան մինչև 1894 միայն կրնայ շարունակել և հիմա իւր կացութիւնը նպաստաւոր է այդ լուծման:

— Պուլկարիոյ նոր գործակատար Պ. Տիմիթրօֆ անցեալ չաբաթ երեկոյ մայրաքաղաքս ժամանեց:

— Լիբանանու թրամուէյին համար Ապուր ԼԱճմէտ Հազիր էֆէնտիի տըրուած արտօնութիւնը 60 տարւոյ բարձրացած է:

— Զորուլի և Ադրիանուպոլսոյ շըրջակայքը մեծաքանակ ձիւն տեղացեր է:

— Վանայ լճին մէջ չողենաւ բանեցնելու համար ընկերութիւն մը կազմելու միտք կայ:

— Միխայրեքի (Գաղատիա) նախնական դատարանի անդամք ինչ ինչ զեղծումներ գործած լինելով, քննութիւն բացուած է:

— Գարբալի Գօրնա գիւղին վրայ մարտ 11ի գիշերը աւազակներ յարձակելով, մարդ մը լեռը տարեր և 300 ոսկի փրկանք պահանջեր են: Աւազակը կը հալածուին և կը կարծուի թէ լեռը տարուած մարդը թող տրուած է:

— Պրուսայի մէջ փետր. 26ի գիշերը երկու գինեալ ոճրագործք Բալըն Պըչաք օղլու Զարիֆի տունը մտնելով, քրոջը պատիւը բռնաբարեր ու ձերբակալուեր են:

— Երուսաղէմի Յունաց Ս. Կատարինէ եկեղեցին ի նորոյ կառուցուելու արտօնուած է:

— Քասապօլի դատարանները քննելու պիտի երթայ Մազար էֆ. դատաւոր Վերաքննիչ ատենի:

— Տրապիզոնի մէջ կրկնաշարժի ցնցումներ զգացուեր են կիրակի գիշեր: մարդու միայն չկայ:

— Պանսրմա յատուկ պաշտօնեայ մը զրկուած է, մայրաքաղաքիս մեծ փողոցներուն սալայատակման պէտք եղած քարերն առնելու համար:

— Սիճէֆիի ծանօթ աւազակապետին՝ Բարթան Աթմանսի՝ շատ նմանող անձ մը սպաննուած է ի Ռուսնուք: Այդ մարդուն գլուխը պիտի զրկուի Պուրկազ, ուր բանտարկուած է նոյն աւազակախումբէն մէկը:

— Դ. Զօրաբանսի (երզնկա) հրամանատար Զէքի փաշա քննական պտոյտի մ'եղած է Վանա և Կարնոյ կողմերը:

— Պրուսայի նահանգին մէջ 1307ին 3241 տնուր (14546 հողի) գաղթական հաստատուած են:

— Սիլիվրիի մէջ ծագած պաճարախտը անհետանալով արգելք վերցընուած են:

— Պիլա գաւառակին ժողովրդեան ու գաղթականաց միջև ծագած անհամաձայնութիւնը կարգադրելու համար յանձնաժողով մը կազմուած է:

— Երէյիի հանքերէն միոյն մէջ ջրոյ երակ մը պայթելով չորս գործաւորք խեղդուեր են:

— Պրուսայի նահանգին ոստիկանապետ Սիւլէյման էֆէնտի որ զեղծում գործած լինելուն համար դատեցնելու արժան էր, անմեղ հռչակուեր է:

— Մուսանիա Պրուսայի երկաթուղւոյ բացումի յառաջիկայ մայիսին պիտի կատարուի:

— Մանասքըի մէջ ափիոնի հունձքն այս տարի 41% պակաս պիտի լինի:

— Զանգըրիի մէջ վերջին անձրևներէն ողողումներ յառաջ գալով, մէկ քանի կամուրջներ փլեր են:

Ա Ռ Ժ Ի Բ Դ Ռ Ա Մ Ո Տ				
Օսմ. լիւրն 100 զրշ. էն				
Մէքիաիյէ	108	16	Վեցնոց	102 20
Քառորդ մէքիո	106	25	Բուսիոյ բու	89 32
Մանր մէքիո	101	30	Նաբալէոն	87 22
Մէթալիք	97	40	Գրիմից	51 14
Հինգնոց	102		Անգլ. լիւրն	110 4
Մանէթ թղթադրամ 9				
Գոնալիտէ	20	27	Բուս. երկ.	73
Թահվիլ Օսմ.	76	30	Թապիլիյէ	49 20

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՅՅԵՐՈՒ ՆԻԳՕԼԱ ԵՒ ԲՕԼ ՍՄԻՐՆՅԱ ԵՂԲԱՐՅ

Ղալաթիա, Ռուսական վանքին դիմաց, Այնիգուլա եկեղեցւոյն մօտ, Թիւ 30

Վաճառատունս՝ անցեալ տարւոյ Մայիսի սկիզբները բացուած լինելով, վաճառելի թէյերու տեսակներն եւ գիններն ի ստորեւ նշանակեալ, կը ծանուցանէ ի գիտութիւն յԱրգոյ հասարակութեան։

Թիւ	1. Լիանսին	Ֆունթ	32	Դահեկան
2.	Չինական վարդ	30		
3.	Պուքէ էմբէրիալ	26		
4.	Ֆուչէֆու	20		
5.	Տնական թէյ	16		
6.	Խնայողական տեսակը	12		

Վերոյիշեալ թէյերը՝ մէկ, կէս եւ մէկ չորրորդ ֆունթնոց (133 տրամ) ծրարներու մէջ ամփոփուած՝ մետաքսեայ եւ կապարեայ թղթով պատած, իրենց վըրայ կը կրեն վաճառատան կնիքն եւ ստորագրութիւնն։ Սոյն թէյերը չաւրուելու համար մթերանոցին մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են, ուր արգելուած է նոյն իսկ ծխելն։

ԶԴՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾԵՐԷՆ

Անոնք որ կրնան որոշել թէյին լաւն ու վատը, կարող են իրր նմոյշ գնել վաճառատունէս փոքր ինչ եւ փորձել։ Վաճառատանս միւս ճիւղն, որ ի Ռուսիա աշխարհածանօթ է արդէն։

Սոյն թէյեր կը վաճառին նաեւ ի Բերա, Թիւնելի դիմաց Ֆրաթէ վաճառատունը, Պոլիս Պահճէ գարու Շէյխիւլիսլամ խան թիւ 2 Միւսիւ Նիքիթիէ էրպէնկին մթերանոցը, Օրթագիւղ Թաշ Նէրտիւպան փողոց թիւ 5 Պ. Գրիգոր Միսկճեանի գեղարանը, Իւսկիւտար Թաշ Տէմիրճիլէր փողոց թիւ 25 Միւսիւ Ա. քէստօրիտիսին գեղարանը եւ Գատըգիւղ Նպարավաճառ Բարաթանասիօին մթերանոցը թիւ 19։

(17—18)

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

Կ. ՆԱՂՐԱԻԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼՆԱՆ ԸՆԿ.

Պահիէ—Գաբու, ձէլալ պէյ խանի դրան կից, Թիւ 10



Զմեռուան առթիւ սոյն հանրածանօթ վաճառատան մէջ պատրաստ կը գտնուին Չինեւ եւ Ճապոնեւ ուղղակի հասած նոր բերք՝ զանազան տեսակ գերընտիր եւ ազնիւ ու անուշաբոյր ամէն ճաշակի յարմար։ — Ծառնական, Չինական եւ Հնդկական այլ եւ այլ մեծութեամբ եւ ձեւերով թէյի տուփեր, գեղակերտ եւ նկարազարդ — Յաճախորդաց գոհացում տալու համար բնաւ ջանք չլինալուի։ — Յանձնարարութիւնք կը կատարուին փութով եւ ճշգրտութեամբ։ — Գինները

որոշ եւ խիստ չափաւոր։ — Չիք սակարկութիւն։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ

133րդ ՎԻՃԱԿԱՆ ՍՈՒԹԻԻՆԸ

Տեղի պիտի ունենայ յառաջիկայ մարտի 19 ին։ Մեծ պարգեւն է

600,000 ՖՐԱՆԿ ԿԱՄ **30,000** ԴԱՂ. ՈՍԿԻ

Պիտի շահին 600 անձինք։ Ամենէն փոքր պարգեւն է 400 ֆրանք։ Բաղդատորմք վաւերացեալ են Օսմանեան առեւտրական նախարարութեանէն։

Գին քաղղատունի 7 1/2 դրոշ։

Գաւառներէն ստանալ ուղղութիւնը պէտք է դիմեն ԵՄՂԻԿԻ Յանձնակատարութեան Իրասենեկին։ Փօստի ծախուց համար պէտք է զրկել մէկ զրուշ աւելի։

Շահող թուոց ձիճի ցուցակը կը հրատարակուի ԵՄՂԻԿԻ մէջ։

ԿԻԻՆ ՏՕՂՏՈՒ

Սուլթան համամ, Ֆնտգլեան խան, 41

Եւրոպայէն նոր բերուած հետեալ ապրանք կը վաճառուին 12 դրուշ 30 փարայի։

1 Գծաւոր բրդեայ արանց ֆանելա։
3 Զոյգ կապարագոյն բրդեայ արանց ֆանելա։

1 Հատ գունաւոր բրդեայ կանանց ֆանելա։

2 Զոյգ կապարագոյն բրդեայ կանանց գուլպայ։

1 Հատ Բրոֆ. Ժաքէրի դրու թեամբ ներքնաշապիկ։

1 Հատ Բրոֆ. Ժաքէրի դրու թեամբ ներքնավարտիք։

1 Անգղ. կտաւէ օձիքով ու թեւնոցով արանց շապիկ։

3 Արանց շապիկի նորաձեւ ձերմակ կուրծք։

6 Արանց շապիկի նորաձեւ օձիք։

3 Զոյգ քթանէ շապիկի թեւնոց։

1 » մէջը ֆանելայով ձեւնոց։

1 Հատ գունաւոր արանց ֆանելայ վարտիք։

1 Հատ բրդեայ կանանց ուսնոց։

1 » բուրդէ հիւսուած կանանց ծածկոյթ։

1 Հատ գունաւոր բրդեայ տղոց չըր-շաղգեստ։

1 Հատ բրդեայ տղոց բաճկոնակ։

2 » ամենալաւ տեսակէն մետաքսեայ փողկապ։

12 Հատ գունաւոր կամ ձերմակ քթան թաշկինակ։

6 Հատ գունաւոր երեսի սրբիչ։

4 » կարմիր գծաւոր խաւուռ։

3 » շատ մեծ ոտքի խաւուռ։

4 Հատ ծայրերը գունաւոր ծաղկենկար քթան խաւուռ։

3 Հատ ծայրերը շինուած լաւ քթան խաւուռ։

6 Հատ գունաւոր քթան սրբիչ։

1 » մետաքս կամ բուրդ կանանց լասթիքի ֆանելայ։

1 Զոյգ շատ երկայն անգղ. շլարչէ վարագոյր։

1 Հատ մետաքս տուփի մէջ 2 լաւ վանտա, 1 օճառ, 1 օտը քօլօներ։

6 Հատ շուրջը գունաւոր կանանց քթան թաշկինակ։

4 Հատ լաւ տեսակ արանց քթան թաշկինակ։

6 Հատ շուրջը անթիքայով ձերմակ կանանց թաշկինակ։

6 Ծաղկենկար տամասէ անձեռոց։

1 Հատ ծոպերը շինուած 8 հոգինոց սեղանի ծածկոց։

6 Անգղ. արծաթէ ապուրի դգալ։

3 Հատ դանակ եւ 3 պատառաքաղ։

2 » գոյնզգոյն լամայի ֆանելայ։

2 Զոյգ գծաւոր բրդեայ կանանց գուլպայ։

3 Հատ Լիոնի մետաքսէ գունաւոր թաշկինակ։

2 Հատ շատ մեծ քթանէ խաւուռ։

2 » լաւ տեսակ գաղ. մետաքս թաշկինակ։

6 Հատ Անգղ. արծաթէ սուրճի կամ անուշի դգալ։

3 Բրդեայ լասթիքի տղու գուլպայ։

Յանձնարարութեանց համար պէտք է գրել «Մաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակին։

10—12

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԻՆ ՏԵՍԱԿ ԳՐԱՆԱԿԱՆ
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ դաշնակաշարդար ԷՌԱՌԻ
հաշակաւոր գործատան

Գնուումն եւ վաճառուումն
Փոխանակութիւն հին դաշնակաց հետ

Կը վաճառուին ամէն տեսակ դաշ-
նակներ ամսական վճարմամբ և մասնա-
ւորաբար Գաղղիոյ Լաւագոյն գործա-
րաններէն Քէլէնի դաշնակները, խիստ
գիւրամատչելի գիներով:
Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն
գործարանաց դաշնակներէն կը բերուին:

Վարձու նոր դաշնակներ չափաւոր
գիներով:

Բաժանորդագրութիւն դաշնակաց
յարգարման (accord):

Դաշնակաց նորոգութիւն, գաղղիական
ընտիր նիւթեղէններով:

ՀՐԱՆԱԳԻ դաշնակները չհինցներու
և Լաւագոյն վիճակի մէջ պահելու:

Գաւառներէ և զած յանձնարարու-
թիւնք ամենայն խնամով և փութով կը
կատարուին:

Անմրցելի աժանութիւն


Ա. Երկ մանրամասնութեանց համար
Դիմել Բերա, Մեծ-Փողոյ, Ղալաթա
Սարայի դիմաց, Նրիսթաքի խան,
Թիւ 40: (22-30)

ԱՄՈՒՄԵԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

✱ ԿԱՅ ✱

ԱՌԱՋՆՈՐԴ

ԱՄՈՒՄԵԱՅԵԱԼ ԱՆՁԱՆՑ



ՏՊԱԳՐ. Գ. ՊԱՂՏԱՏԵԱՆ

Գին 5 Լրե.

Յրանայի բժշկական համալսարանէն համ-
բաւեւոր Տօք. Քլէմանի սոյն հետաքրքրաշարժ
եւ ընտիր երկասիրութիւն հայերէն մաքուր
աշխարհաբարի թարգմանած, բարոյական
բազմաթիւ դասերով աղարեւ ճանկազին ծա-
ռայութիւն մը սիսի մատուցանէ այն ամէն ան-
ժանց, որ ամուսնական խորհրդաւոր կենաց
մէջ մտնելու մտադիր են եւ կամ մօտ, նաեւ զի-
տական նոր ճշմարտութիւններով պիտի ցուցնէ
Քէ. ապագայ ամուսինը, քն. պարտին զիտալ
իրենց ամուսնութեան նախընթաց օրը, եւ այ-
նուհետեւ. նաեւ Քէ ոյր են այն անմիջական
դարմաններն, հարկաւոր կատարելապէս բու-
ժելու ամուսնական հակառողջապաշտիկ զեղծ-
մանց ճիւղը եւ ցաւայի հետեւանքները:
Կենդանացողին է Զարդարեան գրաստը, կը
գտնուի նաեւ բոլոր Հայ գրամատչանք քով:

ԱՐՏՈՒՄԱՏՐ Ա. ՍԱԲԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆԵՒՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էպի-Չապիթի փողոց. Ենի 61

ՅԱՆԷԼԱ ԱՊՐԱՆԱՑ ՀԻՒՍԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՍԼԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մահմուտ փաշա, Բիւրքնի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնագիւղն է
Ի Պահչէ-Գարու, Մաքսաւտան կարգ, Թիւ 44 Թօհաֆիյէի վաճառատունը:



Թէ՛ մեծ և Թէ՛ փոքր քա-
նակութեամբ՝ արանց, կանանց
և տղայոց համար՝ անխառն
բրդէ, մանածէ, ևայլն, ուղ-
ուած Թանձրութեամբ և ուղ-
ուած չափով յանձնարարու-
թիւնք կ'ընդունուին ու պատ-
րաստ կը ծախուին ֆանէլա
չապիկներ, վարտիքներ, մի-
սոցուններ, ևայլն: Ապ-
րանքները կը մրցին եւրոպա-
կաններուն հետ Թէ՛ աժանու-
թեամբ, Թէ՛ դիմացկունու-
թեամբ և Թէ՛ իրենց նուրբ
ճաշակով: Յաճախորդք ամէն
կերպիւ գոհ պիտի մնան:

20-24

Մոշրատեան Մկրտիչ եւ Յովհաննէս կորստից վաճառատունք

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալանա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բէրշէմպէ բազար,

Մահմուտիյէ-ձատտէսի, Թիւ 70 եւ 59:

Անգղիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատ-
րաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ուռնական կախիկաղակք (ասոմ քիլի-
տի), հիւսան (տիւլկէր) գործիւնք, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյէ
ամաններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, երկրագործական բազմազան
գործիւնք, ևայլն, ևայլն, ամենքն ալ շատ աժան գնեցող: Ընկերութեանս մե-
քենագործն գիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:
Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք շուտ և կանո-
նաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով կ'երոպայէ՛րե-
րեւ կ'ուտանք և ուզուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝
Մ. Յ. ՄՈՒՐՏԱՏԵԱՆ ԵՂԲԱՐՑ
18-24 70, Եօրկանճըլար ձատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

ԱՐԱԳԵԱՆ ԵՂԲԱՐՑ

ԴԵՂԱԳՈՐԾԻ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԻՉԻ ՄԱՍՆԱԽՈՐ ԴԵՂԵՐՈՒ

ՍԱՐՍԱԲԱՐԻԼԱ

ՍԱՄՓՈՍՆ

ԲՈՊ ՍԱՐԱՑԵԱՆ

Արիւնը մաքրելու և վերանորոգելու
համար 30 տեսակ բոլորեղիւնք յատկա-
պէս պատրաստեալ ընտիր և արտօր-
համ օջառակ, որ միակ դարմանն է
արեան անմաքութենէն յառաջ եկած
հիւանդութեանց, որպիսիք են՝ մու-
թային հիւանդութիւնք, սողնական
ախտ, քոստութիւն, Թուղլու պալ-
կամ, մայասըլ, գաղղիական ախտ, Թէ՛
հին և Թէ՛ նոր արու միակ հրաշքի
դարմանն է: Գին չիւք 25 դրուք:

Մազ, պէս և մօրուս երկարող և
անոնց արմատներու հիւանդութիւնն
անհետացնող, իւր եղանակ աղբեցու-
թիւնն արժանացած է շնորհակալու-
թեանց և քաջալերալան ուղերձներու:
առաջին գեղն է իւր տեսակին մէջ:
Գին չիւք 15 դրուք:

Ճօխ հաւաքածոյ ընտիր և ճաշակոյ-
ւոր քաղցրաւիւնեաց և ըմպելեաց քո-
քաօ, շորթիւօզ, մրգաբօնեակ, և ըն,
և ըն, որք Թէ՛ ճաշակի փափկութեամբ
և Թէ՛ գնեցու աժանութեամբ կրնան
մրցիլ եւրոպականներու հետ:

Կը գտնուին Պոլիս, Սուլթան Համամ, Բիւշիւք Աջըր Էֆ. խան, Թիւ 10:
Գաւառական յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

3-10